

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Պետութեան Ընկալման Հետ Իսկական Աղերս Չունեցողները

Համաժողովրդային պոռթկումով իշխանութենէն հեռացուած՝ նախկին նախագահ Սերժ Սարգսեան բաց նամակով դիմած է Միացեալ Նահանգներու, Ռուսաստանի եւ Ֆրանսայի նախագահներուն, որպէսզի մարդասիրական օգնութիւն ցուցաբերեն Արցախի ժողովուրդին: Եթէ այդքանով բաւարարուէր տասը տարի երկիրը ղեկավարած անձի, այդ քայլը պիտի նկատուէր ողջունելի, սակայն անոր բողոքը աւելի շատ ուղղուած էր երկրի ներկայ վարչապետին դէմ եւ ոչ թէ՛ Ատրպէյճանի ղեկավարին:

Սերժ Սարգսեան իր նամակին մէջ կը գրէ որ, 2018 թուականին Հայաստանի հասարակութիւնը յուզական որոշում կատարեց եւ «իշխանութիւնը յանձնեց պետութեան ընկալման հետ որեւէ աղերս չունեցող գործչի»:

Յուլիս 24-ի իր մամուլային ասուլիսի ընթացքին, լրագրողներէն մէկուն հարցումին պատասխանելով վարչապետ Փաշինեան անդրադարձաւ Սերժ Սարգսեանի նամակի այդ բաժինին: «Ես այդ մօտեցմանը, որ Սերժ Սարգսեանը կարող էր նամակ գրել, նորմալ եմ վերաբերուում, բայց ԼՂ-ում հաստատուած հումանիտար ճգնաժամի մասին նամակ է գրում, այդ մարդիկ վերցնելու եմ տեսնեն, որ առաջին պարբերութիւնները այն մասին են, թէ ինչ վատն է Հայաստանի գործող ղեկավարը: Մենք էլ ենք ընդդիմութիւն եղել, եւ մենք Հայաստանի օրակարգի հարցերի մասին դրսի հետ հաղորդակցուելիս, նամակներ գրելիս այդպիսի բաներ մեզ թոյլ չենք տուել: Ամօք է ուղղակի: Ես ինձ համար չեմ ասում, ես պատկերացում եմ այդ մարդկանց ռեակցիան: Համ իրեն արժեզրկեց, համ երկիրն արժեզրկեց», ըսաւ Փաշինեան:

Իր իշխանութեան տարիներուն Սերժ Սարգսեան Արցախը պաշտպանելու համար կրնար գործնական քայլեր առնել՝ առաջին հերթին հզօրացնելով ու արդիական գնդերով օժտելով ՀՀ զինուած ուժերն ու Արցախի պաշտպանութեան բանակը: 44-օրեայ պատերազմը չսկսաւ 2020-ի Սեպտեմբեր 27-ին, այլ՝ 2016-ի Ապրիլի մէկի քառօրեայ պատերազմով, որուն աւարտին պարզապէս հաստատուեցաւ զինադադար, իսկ սահմանի վրայ կրակոցները դադար չունեցան: Բոլորիս յիշողու-

Քանի Դեռ Պայմանագիրը Ստորագրուած Չէ, Պատերազմը Հաւանական է. Փաշինեանի Հարցազրոյցը «Ֆրանս-Փրեսի» Հետ

Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը, ինքնիշխանութիւնը եւ Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքներն ու անվտանգութիւնը Երեւանի կարմիր գծերն են Պաքուի հետ բանակցութիւններուն, «Ֆրանս-Փրես» գործակալութեան հետ ունեցած հարցազրոյցի ընթացքին ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Մեր դիրքորոշմամբ՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրաւունքներին ու անվտանգութեան հարցը պէտք է հասցեագրուի հէնց Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցութեամբ տեղի ունեցող երկխօսութեան, բանակցութիւնների, քննարկումների արդիւնքում, մենք դա անուանում ենք Պաքու-Ստեփանակերտ երկխօսութիւն», - ըսած է ան՝ շարունակելով. - «Բայց հաշուի առնելով ուժերի անհամաչափութիւնը՝ Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի, մենք կարծում ենք, որ եթէ մենք Ստեփանակերտին եւ Պաքուին թողնենք դէմ-դիմաց, Պաքուն հնարաւորութիւն կ'ունենայ կամ մոռացութեան մատնել այդ օրակարգը, կամ լինել մենախօսողի եւ ոչ թէ երկխօսողի դերում, եւ սա պատճառը, որ մեր ընկալմամբ այդ խօսակցութիւնը պէտք է տեղի ունենայ միջազգային մեխանիզմների



Վարչապետ Փաշինեան «Ֆրանս-Փրեսի» լրագրողին հետ հարցազրոյցի ընթացքին

չըջանակում, որտեղ վկան, ներկան կը լինի միջազգային հանրութիւնը»:

Լրագրողը հարց տուած թէ արդեօք կը հաւատայ Ատրպէյճանի հետ կայուն խաղաղութեան:

«Եթէ չհաւատայի, ընդհանրապէս բանակցային գործընթացին մասնակցելն իմաստ չէր ունենայ, բայց հաւատալը չի նշանակում, որ երաշխաւորում եմ, որ մենք արդիւնքի կը հասնենք, որով-

հետեւ հասկանալիօրէն ոչ միայն ինձնից է կախուած, բնականօրէն կախուած է նաեւ Ատրպէյճանի նախագահի դիրքորոշումներից», - պատասխանած է Հայաստանի ղեկավարը, նշելով, որ դեր կը խաղան նաեւ միջազգային իրադրութիւնը, մարդասիրական իրադրութիւնը, քաղաքական իրավիճակը:

Ըստ Փաշինեանի, բանակցութիւններու առաջընթացը կը խանգարեն Ատրպէյճանի շարունակուող ագրեսիւ հռետորաբանութիւնը, ատեւութեան խօսքը հայերու եւ ամէն հայկականի նկատմամբ, ատեւութեան գործողութիւնները եւ վրէժի քաղաքականութիւնը Լեռնային Ղարաբաղի հայութեան ու ժողովրդի նկատմամբ, էթնիկ զտումներու քաղաքականութիւնը:

Միաժամանակ, Երեւանում համոզուած են, որ բանակցային ճանապարհով հարցերը լուծելու մեթոտը միակն է. - «Բայց եթէ բանակցային ճանապարհով հարցեր չեն լուծուում, այդ բանակցութիւնները նոյնպէս հանրութեան շրջանում կարող են ընկալուել որպէս ժամավաճառութիւն, - ա-

Իրան Զ'ընդունի Տարածաշրջանի Երկիրներու Սահմաններուն Փոփոխութիւնը. Իրանի Նախագահ Ռայիսի՛ն Սիրզոյեանին



Իրանի նախագահ Իպրահիմ Ռայիսի կ'ընդունի նախարար Արարատ Սիրզոյեանը

Աշխատանքային այցով Թեհրան գտնուող ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Սիրզոյեանը ընդունած է Իրանի նախագահ Իպրահիմ Ռայիսիին: Երկու պաշտօնեաները քննարկած են տարածաշրջանային հարցերը:

Իրանի նախագահը յոյս չայտնած է, որ Երեւանի եւ Պաքուի միջեւ բանակցութիւնները կը խթանեն տարածաշրջանին մէջ խաղաղութիւնն ու անվտանգութիւնը:

Ռայիսիին նաեւ շեշտած է, որ Թեհրան կ'աջակցի տարածաշրջանի բոլոր երկիրներու տարածքային ամբողջականութեան:

«Իրանի իսլամական Հանրապետութիւնը չ'ընդունում աշխարհաքաղաքական որեւէ փոփոխութիւն, տարածաշրջանի երկիրներու սահմաններու փոփոխութիւն եւ կ'աջակցի տարածաշրջանի բո-

Շար.ը էջ 6

«ՄԱՍԻՍ»Ի ՏԱՐԵԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

Տարեկան արձակուրդի բերումով «Մասիս» լոյս չի տեսներ Օգոստոսի առաջին եւ երկրորդ շաբաթները: Արձակուրդէն ետք յառաջիկայ թիւը լոյս պիտի տեսնէ Շաբաթ, Օգոստոս 19-ին: Այս ընթացքին կը շարունակէ գործել համացանցային Massispost.com մեր կայքէջը, Անգլերէն եւ Հայերէն բաժիններով:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Մինսկի Խմբի Համանախագահ Երկրների Ղեկավարներին Բողոք-Նամակ Գրած Սերժ Սարգսեանն Այդպես Էլ Չի Հասկացել՝ Ինչու 2018-Ին Յեղափոխութիւնը Տեղի Ունեցաւ

ԴԱԻԹ ԼԵԻՈՆԵԱՆ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի բաց նամակը, որով նա դիմում է ԱՄՆ, ՌԴ եւ Ֆրանսայի նախագահներին, աւելի նման է սեփական ժողովրդից ու Հայաստանի ընտրուած իշխանութիւնից բողոք-նամակի, քան ընդամէնը 5 տարի առաջ Հայաստանի եւ Արցախի անունից բանակցողի խօսքի: «Դիմում եմ ձեզ՝ նախեալ առաջին համաշխարհային երկրների ղեկավարներին, որպէս առաջնորդների, ովքեր անձամբ գիտեն, թէ ինչ հանգրուանում էր Արցախեան խնդրի լուծման բանակցային գործընթացը մինչեւ 2018 թուականը, երբ մեր հասարակութիւնը յուզական ընտրութիւն կատարեց եւ իշխանութիւնը յանձնեց պետութեան ընկալման հետ որեւէ աղերս չունեցող գործչի: Ես հասկանում եմ, որ շատ-շատերը հնարաւորութիւն ստացան փորձելու լուծել Արցախի խնդիրը՝ օգտուելով այդ մարդու՝ սեփական երկրի շահերի հետ կապ չունեցող անտրամաբանական քայլերից: Բայց փաստ է, որ եւ՛ հարցը չի լուծուել, եւ՛ խնդիրներն են շատ աւելի խորանում, իսկ այդ մարդն էլ այսօր յստակօրէն չունի մեր ժողովրդի քուէն՝ Արցախը ճանաչելու որեւէ այլ երկրի կազմում եւ արցախցիներին կողմից էլ բացարձակապէս չունի քուէ՛ ինքնակամ

որոշելու իրենց ճակատագիրը», - իր ուղերձում համայն աշխարհին բողոքել է Սարգսեանը: Ո՞ւմ եւ ի՞նչ է ասում նախկին նախագահը, որը մտնել է ոչ միայն բանակցային ռեսուրսը՝ 2018-ին Ապրիլի 17-ին անձամբ խոստովանելով, որ բանակցութիւնները փակուղում են, այլեւ մեր բազմահարկ զոհերի գնով ձեռք բերուած Արցախեան առաջին պատերազմի յաղթանակը՝ այդպէս էլ որեւէ լուծման չտանելով Արցախի հարցը, գերազասելով ժամանակ ձգել սեփական իշխանութիւնը երկարաձգելու համար: Սակայն անդրադառնանք ուղերձում տեղ գտած մէկ այլ հանգամանքի նախկին նախագահը բողոքել է, թէ ընդդիմադիր կուսակցական պատասխանատուները մեր երկրում կա՛մ գտնուում են ուժեղ բռնաճնշումների տակ, կա՛մ ուղղակի բանտարկուած են: Մի կողմ դնենք այն, որ ընդդիմադիրները երբեք այնքան ազատ չեն արտայայտուել մեր երկրում, որքան այսօր, եւ ուշադրութիւն դարձնենք, թէ ինչու է բողոքում Սերժ Սարգսեանը: Մերժուած նախագահը խնդիրների հիմքում տեսնում է 2018թ.-ին Հայաստանում տեղի ունեցած յեղափոխութիւնը, որի արդիւնքում նախկին բազմաթիւ կոռուպցիոներներ կամ անցնում են դատական գործերի քննութեամբ, կամ էլ փախել են հայրենիքից՝

վայելելու համար պետութիւնից գողացուած գումարները: Ուշադրութիւն դարձնենք նաեւ, որ Սերժ Սարգսեանը ինքը եւս անցնում է մի շարք դատական գործերով: Օրինակ՝ այս օրերին շարունակուում են նաեւ Սերժ Սարգսեանի եւ իր դստեր՝ ենթադրեալ ապօրինի գոյքի գործով դատական նիստերը: Ահա թէ ինչու է բողոքում Սարգսեանը: Բայց կոռուպցիան եւ թաւանը բաւականին երկար տարիների պատմութիւն ունեն չէ՞նք: Օրինակ՝ պաշտպանութեան նախկին փոխնախարար վահան Շիրիսանեանը իր բաց նամակով նշում էր, թէ ինչպէս էին ԱՄՆ-ում 1999 թ. Սեպտեմբերին վազգէն Սարգսեանին տուել մի ցուցակ, որում տարբեր պանքերում անյայտ ծագումով լուրջ գումարներ ունեցող հայ պաշտօնեաներ էին եղել: «Վազգէնը ինձ զգուշացրեց, որ ուղարկելու է ինձ մօտ մարդկանց, որոնք «կամաւոր» ներդրումներ են անելու արդիւնաբերութեան մէջ: Եկան քո ամենամտերիմ մարդիկ, որոնցից մէկը պարտաւորուեց ներդնել 200 մլն. տոլար՝ Սերժ Սարգսեանը, միւսը՝ 70, յաջորդը՝ 20: Նրանք զալիս էին վարչապետի մօտից քրտնած ու վախուրած: Վազգէնը սկսել էր թաւանաթափութեան պրոցեսը»: Յետագայ տարիները ցոյց տուեցին, որ Սերժ Սարգսեանի վարչապետութեան եւ նախագահ

հութեան տարիներին Հայաստանում կոռուպցիան հասել էր «աննախադէպ յաջողութիւններին»: Նոյնիսկ Սարգսեանն էր այդ դառը իրողութիւնը ներկայացնում որպէս սովորական մի բան: Դեռեւս 2012թ.-ին France 3 հեռուստաընկերութեանը տուած հարցազրույցում Սերժ Սարգսեանն անկեղծօրէն ասել է. «Մեր երկրում, ճիշտ է, կոռուպցիա կայ, բայց դա նոր բան չէ, վաղուց է մտած»: Այնպիսի տպաւորութիւն է, որ կոռուպցիայի հանդէպ սէրը նախկին իշխանականներին մոռացութեան էր տուել Արցախի հարցի լուծման գնալը: Տարիներ շարունակ հարցի լուծումը յետաձգելով եւ այն հասցնելով ամենաբարդ կէտին՝ Սարգսեանը հրաժարականից մի քանի օր առաջ խոստովանեց, որ բանակցային գործընթացը լաւատեսութիւն չի ներշնչում եւ պէտք է յոյս ունենալ, որ Ատրպէյճանը չի յարձակի: Հիմա էլ հայրենասէր խաղալու նոր միջոցներ է փորձում գտնել: Եթէ Սերժ Սարգսեանը Արցախը այդքան շատ է սիրում, ապա ինչո՞ւ 44-օրեայ պատերազմից յետոյ չզնայ այնտեղ՝ շէնացնելու, եւ փոխարէնը նախընտրեց Երեւանի կեդրոնում ցոյցեր սկսել ու իշխանափոխութեան պայքար մղել: «ՍԻՎԻՔ»

Ռուսաստանի ճակատագիրը Կովկասում. Ինչ Կայ Նիկոլ Փաշինեանի Սեղանին

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Մի շարք փորձագէտներ իմ սեղանին դնում են զեկոյցներ, որ Ռուսաստանը հեռանում է ռեգիոնից, ֆրանսական Ֆրանս-Փրենս գործակալութեանը հարցազրույցում յայտարարել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը, յիշատակելով նաեւ, թէ օրինակ 1915 թուականին Ռուսաստանը հեռացաւ ռեգիոնից եւ Թուրքիայի դէմ միայնակ մնացած հայութիւնը ենթարկուեց ցեղասպանութեան: Առանձին հարց է անշուշտ ցեղասպանութեան պատճառների գնահատումը, գնահատումը, թէ ինչ իրողութիւնների հետեւանք էր հայ ժողովրդի հանդէպ գործուած այդ ոճիրն ու ողբերգութիւնը: Սա ծաւալուն պատմագիտական հետազոտութեան նիւթ է եւ հազիւ թէ արժէ այդօրինակ թեմաները հպանցիկ կերպով շոշափել պետութեան ղեկավարի հարցազրույցներում: Դառնամ ներկայիս խնդրին՝ Ռուսաստանի հեռանալուն, կամ դրա վերաբերեալ փորձագիտական եզրահանգումներին, որ ըստ Նիկոլ Փաշինեանի իբրեւ անկախ փորձագիտական աշխատանք յայտնուում են իր սեղանին: Հետաքրքիր է, իսկ ինչո՞վ են փաստարկուում ու հիմնաւորում Ռուսաստանի հեռանալու մասին պնդումները եւ ընդհանրապէս՝ ի՞նչ է նշանակում Ռուսաստանի հեռանալ տարածաշրջանից, ինչպէ՞ս է այն պատկերուելու, արտայայտուելու, ինչ կայ այսօր, որ չի լինելու վաղը: Այն, որ Ռուսաստանն օրինակ դժկամութեամբ է

հետեւում Հայաստանի հանդէպ իր անվտանգային, դաշնակցային պարտաւորութիւններին, ոչ թէ Ռուսաստանի գնալու, այլ հակառակի վկայութիւն են, որովհետեւ Ռուսաստանի մնալու հարցում Մոսկուան շատ վաղուց, արդէն երկու տասնամեակից աւելի կարեւոր դերակատարում է վերապահել Ատրպէյճանին: Դրանից բացի, Ռուսաստանը Կովկասից չի հեռանալ ինքնակամ, քանի որ դա նշանակելու է ոչ միայն Կովկասի, այլեւ մերձաւոր արեւելեան ամբողջ ռեգիոնի կորուստ, Հիւսիսային Կովկասի վրայ ուժգնացող ճնշումով: Միայն կարող է թուալ, թէ Մոսկուան Ուրբանիայի պատերազմը «կը փոխանակի» Կովկասում ներկայութեան հետ: Այդ պատերազմը սահմանափակել է ռուսների հնարաւորութիւնը Կովկասում, բայց դա բերում է տակտիկական նահանջի, ոչ թէ հեռանալու՝ նահանջ հենց մնալու տրամաբանութեամբ: Այլ հարց է, որ Ռուսաստանն այլեւս չլինի Կովկասում անկախ իր կամքից: Բայց այստեղ էլ առաջանում է մէկ այլ հարց՝ իսկ, օրինակ մեծ դիմակալութեան մէջ գտնուող ԱՄՆ ու Չինաստանը ուղղու՞մ են, որ չլինի Ռուսաստան, այդ թուում Կովկասում: Թերեւս ոչ, նրանց խնդիրը պարզապէս այն է, թէ Ռուսաստանը՝ եթէ պարզունակացուած ձեւակերպեմ՝ ի՞նչ ռեժիմով է լինելու ռեգիոնում, այսպէս ասած ինչ կամ որ կողմի «ռազմավարական փրկիւնտիպութեամբ»: Սրանք իհարկէ կարեւորագոյն խնդիրներ են, որովհետեւ առնչուում է Հայաստանի

համար բախտորոշ շերտերի, որոնք կան Ռուսաստանի թէ մնալու, թէ գնալու դէպքում, ընդ որում թէ գնալու, թէ մնալու տարբեր աստիճանների ու ռեժիմների դէպքում: Այսինքն, սա Հայաստանի հարցն է, ոչ թէ Ռուսաստանի, ռեգիոնում Հայաստանի լինելու, որպէս պետականութիւն մնալու տարբերակների, մոտեւների, հեռանկարների հարցն է, ու այն պահանջում է ոչ թէ ցանկութիւնների, տպաւորութիւնների կամ պատմագիտական ազդեցութեան տակ արուող եզրահանգումների, այլ խորքային իրազեկվածութեան եւ մեթոդաբանական հաշիւարկների վրա կառուցված գնահատում: Այո, պատմութիւնը երբեմն «կրկնվում» է, բայց այդ դէպքում այն կրկնվում է իբրեւ «ֆարս», ինչը նշանակում է, որ դրա տակ կամ դրանից վեր արդէն այլ քաղաքական լրջագույն իրողութիւններ են ու շահում են նրանք, կամ այդ ֆարսի հետեւանքները զգալուց խուսափում են նրանք, որոնք նկատում են հենց տեղի ունեցողի ներկայի շերտերը, այլ ոչ թէ տեղավորում ամեն ինչ պատմական պրիզմայում: Պատմութիւնը պէտք է լինի ուղեկցող, ոչ թէ առանցք: Մեզանում արուող դիտարկումներում այն առանցք է, ինչը մեզ անընդհատ պատեցնում է պատմական նոյն ընկալումների շուրջ եւ մենք ներկայ մշտապէս դիտարկում ենք ու չափում պատմութեամբ, այդպէս միշտ հետ մնալով ժամանակից: Ընդ որում, Հայաստանում

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՍԱԹԵՐԹ
ՄՈՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Վազգէն Սարգսեանի Անունով Պիտի Զվախնանք Ըսելու՝ Հայրենիքը Պետութիւնն է, Եւ Պետութիւնը Հայրենիքն է. Փաշինեան



Փաշինեան ելոյթ կ'ունենայ Երկրապահ Կամաւորականներու Միութեան 30-ամեակին նուիրուած հանդիսութեան ընթացքին

Առանց երկրապահութեան եւ երկրապահին անկախութիւն չէինք ունենար, Երկրապահ Կամաւորականներու Միութեան 30-ամեակին իր ելոյթին ընթացքին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Պետութիւնը մի տեղ չէ, որտեղ մարդիկ պէտք է մահանան, պետութիւնը մի տեղ է, որտեղ մարդիկ պէտք է ապրեն: Անկախութիւնը նրա համար չէ, որ մարդն անընդհատ մահանայ այդ անկախութեան համար, անկախութիւնը նրա համար է, որ մարդն ապրի, լինի անկախ, լինի պաշտպանուած, լինի երջանիկ, լինի բարեկեցիկ», նշեց ան:

Վարչապետը յիշատակեց կամաւորական միութեան հիմնադիրը՝ սպարապետ Վազգէն Սարգսեանը, նշեց որ Հոկտեմբեր 27-ի սպանութիւնը, ահաբեկչութիւնը իրաւապահներուն գործն է, եւ համոզուած է, որ ամէն հնարաւորը պիտի կատարուի անոր բացայայտման համար:

«Թոյլ տուէք ձեզ հետ կիսել իմ համոզմունքը, թէ ինչո՞ւ է սպանուել վազգէն Սարգսեանը: Իմ համոզմունքն այն է, որ վազգէն Սարգսեանը սպանուել է, որովհետեւ նախ հասկացել էր անհրաժեշտութիւնը, բայց նաեւ վերջնական որոշում էր կայացրել ազգային ազատագրական պայքարը վերածնունդի պահանջներով ու դարձնել պետականակերտման պայքար, պետութեան պայքար, պետութեան հաստատութեան կայացման պայքար, պետութեան հզօրացման պայքար, որովհետեւ մենք երբեմն չենք հասկանում, եւ սա է մեր մեծագոյն խնդիրը, մեր իրականութեան մէջ միշտ չէ, որ

Պետութիւնը եւ Հայրենիքն ընկալուած են նոյն կերպ: Եւ այդ ընկալումների ճեղքումն է, որ ի յայտ են բերուած մեր բոլոր պարտութիւնները: Մենք պէտք է նոյնացնենք Հայրենիք եւ Պետութիւն հասկացութիւնները, որովհետեւ Պետութիւնը շատ ճշգրիտ է, եւ եթէ Հայրենիքը Պետութիւնն է, որեւէ ուրիշ Պետութիւն կարող է դառնալ Հայրենիք», ըսաւ Փաշինեան:

Ըստ անոր՝ այն մեծամասշտաբ բարեփոխումները, որ տեղի կ'ունենան բանակին մէջ, Զինուած ուժերուն մէջ, Վազգէն Սարգսեանի անուն բարեփոխումներն են. «Մենք պէտք է կարողանանք այս ճանապարհը շարունակել եւ այդ ճանապարհին յիշել այս ուղեբժը, որն Անկախութեան մասին է, որն ինքնիշխանութեան մասին է, որը Պետութեան մասին է: Եւ մենք վազգէն Սարգսեանի անունից պիտի չվախենանք ասել՝ Հայրենիքը Պետութիւնն է եւ Պետութիւնը Հայրենիքն է»:

ԵԿՄ նախագահ Սասուն Միքայէլեանը խոսեց մեր երկրապահներու յանձնած է ԵԿՄ 30-ամեակին նուիրուած յոբելեանական մետաղներ: Յետմահու պարգևատրուած են նաեւ սպարապետ, ԵԿՄ յաւերժ նախագահ Վազգէն Սարգսեանը եւ միութեան ակունքներուն կանգնած բազմաթիւ երկրապահներ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը ԵԿՄ 30-ամեակին առթիւ այցելած է նաեւ «Եռաբլուր» զինուորական պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցած է սպարապետ Վազգէն Սարգսեանի եւ զօրավար Անդրանիկ Օզանեանի յիշատակին:

Եկամուտ Ստացող Աշխատատեղիներու Թուաքանակը Կազմած Է 719.274

Պետական Եկամուտներու կոմիտէն կը տեղեկացնէ, որ հարկ վճարողներու կողմէ 2023-ի Յունիս ամսուան համար ներկայացուած եկամտային հարկի եւ ընկերային վճարի հաշուարկներուն տուեալներով՝ եկամուտ ստացող աշխատատեղիներուն թուաքանակը կազմած է 719.274, ինչ որ գերազանցած է նախորդ տարուան նոյն ամսուան ցուցանիշը՝ 38.224-ով կամ 5,6%-ով: Միաժամանակ, կոմիտէն կը յայտնէ, որ հարկ վճարողներուն

կողմէ դուրս գրուած հաշուարկային փաստաթուղթերու (այդ շարքին՝ ՀԴՄ կտրօններու) տուեալներով՝ 2023թ. Յունիս ամսուան ընթացքին իրականացուած է 55,4 միլիոն գործարք՝ 1044,5 միլիոն ՀՀ դրամ արժէքով, ինչ որ գերազանցած է նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին ցուցանիշը՝ քանակային 2,6 միլիոն գործարքով կամ 5,0%-ով, իսկ արժէքային՝ 204,7 միլիոն ՀՀ դրամով կամ 24,4%-ով:

Դատախազութիւնը Պիտի Ուսումնասիրէ Տիգրան Աւինեանի Օգտին Ընտրողներու Ցուցակագրման Մասին Հրապարակումը

Գլխաւոր Դատախազութիւնը պիտի ուսումնասիրէ օրերս մեծ աղմուկ հանած հետաքննական հրապարակումը, որով հեղինակները պատմած էին Երեւանի աւագանիի ընտրութիւններուն իշխող ուժի թեկնածու Տիգրան Աւինեանի օգտին ընտրողներու ցուցակագրման մասին:

Գլխաւոր Դատախազութեան փոխանցեցին, որ «Ազատութեան» հարցումին հիման վրայ պիտի ուսումնասիրեն հրապարակումը ու արդիւնքներուն մասին պիտի տեղեկացնեն աւելի ուշ: Ինչո՞ւ սեփական նախաձեռնութեամբ չէին սկսած ուսումնասիրութիւնը, պարզ չէ:

«Իրազեկ քաղաքացիներու միաւորման» փաստերու ստուգման հարթակի հետաքննութեան համաձայն՝ իշխող ուժը համայնքապետերուն միջոցով կը ցուցակագրէ մարզերու մէջ բնակող, բայց Երեւանի մէջ հաշուառուած ընտրողներուն տուեալները՝ Աւինեանի օգտին քուէարկելու համար:

Հետաքննութեան հեղինակները նաեւ յայտարարած էին, որ այս գործընթացը կը համակարգէ ՔՊԻ վարչութեան փոխնախագահ Գէորգ Պապոյեանը: Որպէս Պապոյեանի օգնական ներկայացած լրագրողը զանգահարած էր խոշորացված



Երեւանի քաղաքապետի թեկնածու Տիգրան Աւինեան

Սպիտակի փոխքաղաքապետին, քանի մը գիւղերու վարչական ղեկավարներուն: Անոնցմէ առնուազն վեցը յայտնած էին, որ արդէն ունին կամ շուտով պիտի ունենան Աւինեանի օգտին քուէարկողներու ցուցակները: Եւ Սպիտակի փոխքաղաքապետ Յովիկ Յովհաննիսեանը վստահեցուցած էր, որ Սպիտակի քաղաքապետ Քաջայր Նիկողոսեանը կը զբաղի հարցով:

Կ'առաջարկեն Դուրս Գալ ԼոզուՆգային Քաղաքականութենէն. Սամուէլ Բաբայեան

«Միանական հայրենիք» կուսակցութեան նախագահ Սամուէլ Բաբայեանը յայտարարութիւն տարածած է, որուն մէջ կ'ըսուի.

«Արցախում ամենաօգտագործուած բառը «պայքար»-ն է: Պայքարի տարբեր մօտեցումներ են առաջարկուած: Ես առաջարկում եմ դուրս գալ լոզունգային քաղաքականութիւնից, հրաժարուել պայքարի նմանակումից եւ տեղափոխուել գործնական դաշտ:

Որպէս խորհրդարանական երկրորդ ուժի ղեկավար՝ մասնաւորապէս առաջարկում եմ հետեւեալ գործնական եւ իրաւական քայլերը՝

Ստեփանակերտ-Պաքու երկխօսութեամբ ստեղծել փոխվստահութեան միջոցառում, դիմել ՄԱԿին՝ Արցախում ապահովելու միջազգայնօրէն երաշխաւորուած խաղաղապահ մանտաթ, դիմել ՄԱԿին վերանայելու Ատրպէյճանի ան-



Սամուէլ Բաբայեան

դամակցութիւնը այն տարածքով, որով ընդունուել է ՄԱԿ: Դիմել Ռուսաստանի Դաշնութեանը՝ որպէս ԽՍՀՄ-ի իրաւաջաջորդի՝ հանգուցալուծելու Արցախի շուրջ ստեղծուած իրավիճակը»:

Ռոպերթ Քոչարեանն Ու Իր Ընտանիքի Անդամները Հրաւիրուած Են Դատախազութիւն

Գլխաւոր Դատախազութիւնը 2020 թուականէն կ'ուսումնասիրէ Քոչարեաններուն գոյքը եւ օրերս տեղեկացուց յայտնաբերուած ապօրինութիւններու մասին: Իրաւապահները կ'ուզեն բռնազանձել ընտանիքին պատկանող աւելի քան 80 միլիոն տոլարի դրամական միջոցներ, 20 անշարժ գոյք, որոնք հիմնականին մէջ Երեւանի կեդրոնին են, մասնաբաժիններ տարբեր ընկերութիւններու մէջ եւ այլն:

Ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնազանձման գործերով վարչութեան դիմումի հիման վրայ Յուլիս 13-ին Հակափտածութեան Գլխաւորը որոշած էր կալանք կիրառել գոյքի ու դրամական միջոցներու վրայ: Ըստ դատախազութեան, բացի դրամական մի-

ջոցներէն ու անշարժ գոյքէն, կալանքի տակ են նաեւ «Թոյլութեան», «Օրանթ Ֆիթնես», «Նաիրի Ինչուրանս» ընկերութիւններուն բաժնեմասերը, ինչպէս նաեւ Գոնկրէս հիւրանոցն ու «Փլէյ Սիթի»-ն, որոնք Քոչարեաններու ընտանիքին կը պատկանին: Անոնց ընդհանուր արժէքի մասին դատախազութիւնը առայժմ չէ յայտնած: Ռոպերթ Քոչարեանն ու անոր ընտանիքի անդամները, այդ շարքին նախկին նախագահի կնոջը, դստերը, փեսային, երկու որդիներն ու անոնց կիները Օգոստոս 1-ին Գլխաւոր դատախազութիւն հրաւիրուած են՝ ապօրինի գոյքի բռնազանձման գործի նիւթերուն ծանօթանալու եւ դիրքորոշում յայտնելու համար:

ԼՈՒՐԵՐ

Մոսկուայի Մեջ Տեղի Ունեցան Միրզոյեան-Լաւրով-Պայրամով Եռակողմ Բանակցութիւններ



Երեք երկիրներու արտաքին գործոց նախարարները Մոսկուայի մէջ կայացած հանդիպումն ընթացքին

Մոսկուայի մէջ տեղի ունեցած են Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի արտաքին գործերու նախարարներուն եռակողմ բանակցութիւնները: Մինչ այդ երկկողմ հանդիպում ունեցած են Սերկերյ լաւրովն ու Ճէյնսոն Պայրամովը: Ռուսիոյ արտաքին գործերու նախարարը ընդգծած է, որ շարունակական ու շարունակական կեդրոնին են «Լեռնային Ղարաբաղին

վերաբերող եւ անոր հետ կապուած բոլոր հարցերը»: «Մենք կը գնահատենք, որ մեր ատրպէյճանցի բարեկամները կը հասկնան Ղարաբաղի հայ բնակչութեան իրաւունքներն ու անվտանգութիւնը երաշխաւորելու անհրաժեշտութիւնը: Սա առանցքային հարցերէն մէկն է», Պայրամովի հետ հանդիպման ընթացքին յայտնած է Լաւրով:

Ձախարովան Պատասխանած Է Էրտողանի Յայտարարութեան

Թուրքիան 2020 թուականի Նոյեմբեր 9-ի յայտարարութեան կողմ չէ, ըսած է Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Չախարովան՝ մեկնաբանելով Ռեճեպ Թայիպ Էրտողանի խօսքերը Լեռնային Ղարաբաղէն ուս խաղաղապահներու դուրսբերման ժամկէտներու վերաբերեալ:



Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան ներկայացուցիչ Մարիա Չախարովա

Յուլիս 12-ին Վիլնիւսի մէջ ՆԱԹՕ-ի անդամ երկիրներու դեկլարներու գագաթաժողովէն յետոյ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանը վստահութիւն յայտնած է, որ մինչեւ 2025 թուականը ռուս խաղաղապահները պիտի լքեն Լեռնային Ղարաբաղը: Ան համոզուած է, որ «Ռուսաստանը հաւատարիմ պիտի մնայ այս համաձայնագրին»:

«Անգարան Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի 2020 թուականի Նոյեմբեր 9-ի յայտարարութեան կողմ չէ: Այս փաստաթուղթի հիման վրայ ռուսական խաղաղապահ զօրախումբը տեղակայուած է զարաբաղեան հակամարտութեան գոտիին մէջ: Եւ այս փաստաթուղթին մէջ ուրուագծուած են զօրախումբի տեղակայման ժամկէտները, ինչպէս նաեւ հերթական հնգամեայ ժամանակահատուածին անոր հնարաւոր երկարաձգման յարաչափերը», նշած է ռուս դիւանագէտը:

Ան յիշեցուցած է, որ խաղաղապահները կը շարունակեն կարեւոր կայունացնող դեր խաղալ Լեռնային Ղարաբաղի մէջ: Աոնց հիմնական գործառնութիւնը զինադադարին աջակցիլն է:

Հաշուի առնելով տարածաշրջանին մէջ տիրող լարուած իրավիճակը՝ զօրախումբի գործունէութիւնն ալ աւելի պահանջուած է, ըսած է ռուս դիւանագէտը:

«Հարաւային Կովկասի մէջ խաղաղութեան պահպանումը կը բխի ինչպէս Ատրպէյճանի եւ Հայաստանի, այնպէս ալ տարածաշրջանի այլ երկիրներու՝ ներառեալ Թուրքիոյ շահերէն», յաւելած է Չախարովան:

Չախարովան անդրադարձած է նաեւ Մոսկուայի մէջ Ատրպէյճանի, Ռուսաստանի եւ Հայաստանի արտաքին գործերու նախարարներու հանդիպման կայացման հնարաւորութեան եւ նշած, որ անոր «հաւանականութիւնները լաւ» են:

Վարչապետ Փաշինեանի Մամուլ Ասուլիսը

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի Յուլիս 24-ին մամուլ ասուլիս տալով պատասխանեց լրագրողներու հարցերուն, որոնք կը վերաբերէին ներքին ու արտաքին քաղաքականութեան հարցերուն եւ խնդիրներուն:

«Մեր նախընտրական ծրագրին մէջ գրուած է նաեւ «ինքնորոշում» եւ «անջատում յանուն փրկութեան»:

ըսաւ Փաշինեան ու աւելցուց որ, ՀՀ Լեռնային Ղարաբաղի իրաւունքներու եւ անվտանգութեան ապահովման օրակարգը իրենց օրակարգին վրայ է:

անվտանգութիւնն ապահովելու համար», ըսաւ Փաշինեան եւ յաւելցց, որ ԼՂ-ի մէջ Պաշտպանութեան բանակի առկայութիւնը ինքնանպատակ չէ, քանի որ Ատրպէյճանը անընդհատ կ'օգտագործէ չարձակողական, սպառնալից քաղաքականութիւն: «ԼՂ անվտանգութիւնը պէտք է ապահովուի այնպիսի ձեւով, որն առաջին հերթին վստահելի կը թուայ ԼՂ բնակչութեանը», յաւելցց Նիկոլ Փաշինեան:

Վարչապետը նշեց, որ ինքնորոշումը միշտ ալ նկատի առնուած է Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան շրջանակներուն մէջ եւ այդ կ'ապացուցուի փոստաթուղթերուն մէջ, մասնաւորապէս 1996 թուականի Լիզպոնի գագաթաժողովը: «Եթէ մեզ յաջողուի կամ ԼՂ ժողովրդին յաջողուի ապացուցել միջազգային հանրութեանը, որ Ատրպէյճանը ցեղային գոտեմների եւ ցեղասպանութեան քաղաքականութիւն է իրականացնում, ապա այդ ապացուցման պարագայում եւ համոզման պարագայում ուզենք թէ հուզենք կ'աշխատի նաեւ յանուն փրկութեան ծրագիրը»:

Վարչապետին խօսքով՝ Հայաստանի Զինուած ուժերուն գործառնութիւնը, Հայաստանի Սահմանադրութեամբ, ՀՀ տարածքային ամբողջականութիւնն ու անվտանգութիւնն ապահովելն է: «Մենք նոր պատերազմ չենք ուզում եւ ամէն ինչ պէտք է անենք, որ չլինի նոր պատերազմ: Եւ պէտք է ամէն ինչ անենք, որպէսզի նաեւ ՀՀ տարածքային ամբողջականութիւնը վերականգնուի խաղաղ գործընթացի միջոցով սահմանագծման եւ սահմանագծման գործընթացի տրամաբանութեան մէջ»:

«Հայաստանի խնդիրը ՀՀ տարածքային ամբողջականութեան պահպանումն է, եւ մենք մնալու ենք այս տրամաբանութեան մէջ: ԼՂ անվտանգութիւնը ապահովելու համար կայ Պաշտպանութեան բանակ: Սակայն ընդհանուր առմամբ ես կարծում եմ, որ դիւանագիտական ճանապարհները պէտք է օգտագործուեն ԼՂ

ինչ կը վերաբերի «Զանգեզուրի միջանցք»-ի մասին Թուրքիոյ նախագահի յայտարարութիւններուն, Նիկոլ Փաշինեան ըսաւ, որ հայկական կողմին դիրքորոշումները չեն փոխուած: «ՀՀ տարածքում որեւէ միջանցք չի կարող գործել, մենք պատրաստ ենք ճանապարհներ զերբ անհրաժեշտ է գործի տարածքային ամբողջականութեան, ինքնիշխանութեան եւ իրաւագործութեան շրջանակներում»:

Ալիեւ Վստահեցուցած Է, Որ «Զանգեզուրի Միջանցք» Պիտի Զըլլայ. Իրանի ԱԳ Նախարար



Իրանի արտաքին գործերու նախարար Զըսէյն Ամիր Ապտըլ Լահիան

«Հիմա կուրծքով հարցերը կարգաւորելու ժամանակաշրջանը չէ, եւ պէտք է հասնինք կայուն խաղաղութեան: Բանակցութիւններուն մէջ երկու կողմերը պէտք է գոհունակութիւն ունենան, եւ կողմերու պետական շահերը պէտք է պահպանուին», Թեհրանի մէջ յայտնած է Իրանի արտաքին գործերու նախարար Զըսէյն Ամիր Ապտըլ Լահիանը ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի հետ մամուլի համար կատարուած յայտարարութեան ժամանակ:

Իրանի արտաքին գործերու նախարարին խօսքով՝ Իլհամ Ալիեւը իր հետ հանդիպման ժամանակ

վստահեցուցած է, որ «Զանգեզուրի միջանցք» պիտի չըլլայ: Իրանի արտաքին գործերու նախարարը նաեւ նշած է, որ Իրանի եւ Հայաստանի միջեւ համագործակցութեան զարգացման համար վերջին մէկ տարուան ընթացքին բաւականին քայլեր կատարուած են, սակայն աւելին ընելու ներուժ կայ:

«Մենք լուրջ տրամադրուած ենք մէկ միլիառ տոլարնոց ապրանքաշրջանառութեան հարցին եւ յաջողի փուլին կը փափաքենք հասնիլ 3 միլիառ տոլարի ապրանքաշրջանառութեան», յաւելած է ան:

Արցախի Նախագահը Հրատապ Քայլեր Կ'ակնկալէ Ռուսաստանէն, Հայաստանէն, ՄԱԿ-էն

Արցախի նախագահը հրատապ արձագանգ կ'ակնկալէ միջազգային հանրութենէն՝ եթէ քայլեր չընեն, Արցախը աղէտի գօտիէն պիտի վերածուի համակերտնացման ճամբարի. «Միջազգային հանրութեան կողմէ վճռական գործողութիւններու ուշացումը օր օրի կը մօտեցնէ անդառնալիութեան կէտը»:

Մէկ շաբաթ առաջ նախագահական նստավայրին դիմաց վրանի մէջ նստացոյց յայտարարած Արալիկ Յարութիւնեանը նախօրէի երեկոյեան առցանց ասուլիս հրաւիրած է սփիւռքի ու միջազգային լրատուամիջոցներուն համար:

Արցախի պաշարման հետեւանքով բոլոր ոլորտները ծանր ճգնաժամի մէջ են: Կազ, հոսանք, փոխադրութիւն, սնունդ չկայ, մարդիկ կը մահանան. «Արդէն կ'արձանագրուին շրջափակման ուղղակի ու անուղղակի հետեւանքով մարդկային մահեր՝ նորածին երեխաներէն մինչեւ տարէջ քրոնիկ հիւանդներ»:

Սթրատեգիկ ու Լահէյի դատարանները Լաչինի միջանցքը բանառու որոշումներ ունին, բայց Ատրպէյճանը այդ պահանջները ոչ միայն կ'անտեսէ, այլեւ կ'ընդլայնէ ու կը խորացնէ շրջափակումն ու ռազմական սպառնալիքները, կ'արձանագրէ Արցախի նախագահը: Նպատակը, ըստ անոր, Արցախի մէջ ապրելու անտուրանքի պայմաններ ստեղծելն է ու «ձերբազատուիլ Արցախի ժողովուրդէն՝ իրականացնելով Արցախի ամբողջական ցեղային զտում եւ ուժի միջոցով փակելով հակամարտութեան էջը»:

Սա, ըստ Արալիկ Յարութիւնեանի, նաեւ ճնշում է Հայաստանի վրայ՝ Ատրպէյճանի ու Նախիջեւանի միջեւ Հայաստանի տարածքով ճանապարհ ձեռք բերելու նպատակով: Արցախի ընդհանուր շրջափակումը ցեղապանութիւն է եւ զայն կանխելը միջազգային հանրութեան



Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան

պարտաւորութիւնն է: Արցախի նախագահը պատրաստ է Ատրպէյճանի հետ բանակցութեան միջազգային որեւէ ձեւաչափով. «Բանակցային գործընթացի շրջանակներուն մէջ միջազգային հանրութիւնը պէտք է երաշխաւորէ, որ ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառուի»:

Ըստ Յարութիւնեանի, բանակցութիւն սկսելու համար նուազագոյն նախադրեալներ պէտք են, եւ այդ շրջափակման դադարեցումն է, մարդոց տառապանքը թեթեւցնելը. «Արցախը այժմ աշխարհի մէջ միակ տարածքն է, որ կը գտնուի լիակատար մեկուսացման ու պաշարման մէջ՝ առանց որեւէ մարդասիրական օգնութեան ու միջազգային ներկայութեան»:

Նախագահ Յարութիւնեան քայլեր կ'ակնկալէ Ռուսաստանէն, որ վերջինս կատարէ անվտանգութեան երաշխաւորի պարտաւորութիւնները, Հայաստանէն՝ որ Արցախը Ատրպէյճանի կազմին մէջ ճանչնալու վերաբերեալ յայտարարութիւն չընեն, ՄԱԿ-ի տարբեր կառույցներէն՝ որ Արցախի ժողովուրդին հրատապ օգնութիւն տրամադրեն:

Միջազգային Լրագրողները Դիմած Են Ատրպէյճանին՝ Մուտք Գործելու Ղարաբաղ



Լրագրողներու Միջազգային Ֆետերասիոնը եւ Լրագրողներու Եւրոպական Ֆետերասիոնը Ատրպէյճանի իշխանութիւններուն եւ ուստի խաղաղապահներուն կողմէն ապահովելու լրագրողներուն ազատ տեղաշարժը Արցախի մէջ: Այս մասին անոնք գրած են ֆէյսպուքեան էջով: «Էնթընի Պեյլանճըրի եւ

Մուշֆիք Ալթակարլիի հետ փորձեցինք հասնիլ Ստեփանակերտ, քաղաք, որ միջազգայնօրէն ճանչցուած է Ատրպէյճանի մաս, բայց հիմնականին մէջ բնակեցուած է հայերով: Մեզի խանգարեց ատրպէյճանական բանակը՝ ուստական անցակէտէն ընդամէնը 100 մեթր հեռավորութեան վրայ», ըսուած է ֆետերասիոնի գրառման մէջ:

Հայաստանի Նախագահը Աշխատանքային Այցով Կը Գտնուի Իտալիա



Նախագահ Վահագն Խաչատուրեան կը ժամանէ Իտալիա

Նախագահ Վահագն Խաչատուրեանը աշխատանքային այցով ժամանած է Իտալիա:

Խաչատուրեանը հանդիպումներ կ'ունենայ Իտալիոյ նախագահ Սերժիօ Մաթարելլայի, Իտալիոյ բարձրագոյն ղեկավարութեան ներկայացուցիչներուն հետ:

Նախատեսուած է Վահագն Խաչատուրեանի մասնակցութիւնը Ամպրոզեթի ուղեղային կեդրոնի եւ Ափրիկէի ու Մերձաւոր Արեւելքի Եւրոպական Ընկերակցական Խորհուրդի (ECAM Council)՝ «Համաշխարհային առաջնորդներն այսօր. բազմակողմանիութիւնը աւել-

լի լաւ ապագայի համար» խորագիրը կրող միջոցառման:

Հայկական պատուիրակութիւնը արդէն այցելած է Սուրբ Ղազար կղզի, հանդիպած է Միխիթարեան Միաբանութեան հայրերուն հետ եւ ծանօթացած է կեդրոնի բարձրարժէք մշակութային ժառանգութեան ու ներկայիս գործունէութեան:

Վահագն Խաչատուրեան այցելած է նաեւ Վենետիկի մէջ ՀՀ պատուոյ հիւպատոսութիւն: Հիւպատոս Գագիկ Սարուխանեանը նախագահին ներկայացուցած է հիւպատոսութեան օրակարգային հարցերն ու ծրագիրները:

Ռուսիոյ Դժ Փոխնախագահը Հայ Գործընկերներուն Խորհուրդ Կու տայ Ուսումնասիրել Հոռմի Կանոնադրութեան Միանալու Հետեւանքները




Հայաստանի Ազգային ժողովը պէտք է ուսումնասիրէ երկրին՝ Հոռմի Կանոնադրութեան միանալու հետեւանքները եւ գնահատէ անոր վտանգները Ռուսիոյ հետ դաշնակցային յարաբերութիւններուն համար: Այդ մասին Ռուսիոյ Դաշնային ժողովի եւ ՀՀ Ազգային ժողովի միջեւ համագործակցութեան միջխորհրդարանական յանձնաժողովի նիստին ընթացքին յայտնած է Ռուսաստանի խորհրդարանի վերին Պալատի՝ Դաշնութեան Խորհուրդի փոխնախագահ, համագործակցութեան միջխորհրդարանական յանձնաժողովի համանախագահ Եուրի Վորոպոյովը:

նշանակէ, որ Հայաստանը կը ճանչնայ Լահէյի դատարանին իրաւասութիւնը անոր վարած բոլոր գործերուն առնչութեամբ: Մենք կ'ելլենք անկէ, որ մեր հայ գործընկերներուն այս քայլը հակառուսական ենթագիր չունի, բայց, այնուամենայնիւ, գործնականին մէջ այն էական վնաս կը հասցնէ ուստի հայկական յարաբերութիւններուն: Մենք կողմ կ'ընենք մեր դաշնակիցներուն եւս մէկ անգամ ուշադիր դիտարկելու Հոռմի Կանոնադրութեան միանալու հետեւանքները եւ գնահատելու հնարաւոր վտանգները Ռուսաստանի հետ դաշնակցային յարաբերութիւններուն համար: Այս պարագային կը դիմեմ խորհրդարանականներուն», ըսած է Վորոպոյովը: Անոր խօսքով՝ այժմ երկխօսութիւն կ'ընթանայ Ռուսաստանի եւ Հայաստանի արտաքին գործերու նախարարութիւններուն միջեւ:

Հայաստանի Սահմանադրական Դատարանը 2023 թուականի Մարտ 24-ի որոշմամբ նշած է, որ Հոռմի Կանոնադրութիւնը չի հակասեր երկրի Հիմնական օրէնքին: «Ինչպէս կը հասկնանք, այդ կը

Financial Times. «Հայաստանը Շեշտակիորեն Մեծցուցած է Ռուսիա Արտահանուող Արեւմտեան Ինքնաշարժներու Ծաւալը»



«Ընդամենը մէկ տարուան մէջ Հայաստանէն Ռուսաստան ինքնաշարժներու արտահանման ծաւալները աճած են աւելի քան 200 անգամ», կը պնդէ աշխարհի ամենահեղինակաւոր տնտեսական պարբերականներէն մէկը՝ "Financial Times"-ը:

Լոնտոնի մէջ լոյս տեսնող թերթը, հայաստանեան ինքնաշարժի շուկաներու մասին պատմող ծաւալուն տեսագրութեան մէջ կը գրէ. «Հայաստանը ինքնաշարժապահին արդիւնաբերութիւն չունի, սակայն ինքնաշարժներու արտահանման ծաւալները այս փոքր երկրէն դէպի Ռուսաստան շեշտակիորէն աճած են»:

«Եթէ 2022 թուականի Յունուարին Ռուսաստան 800 հազար ամերիկեան տոլարի ինքնաշարժ արտահանուած է Հայաստանէն, ապա այս տարուան Յունուարին այդ ցուցանիշը արդէն 180 միլիոն տոլար կը կազմէր», կը պնդէ "Financial Times"-ը:

Թերթի թղթակիցները բաւական մանրամասնօրէն կը նկարագրեն կիւմրի մաքսային թերմինալի հարեւանութեամբ տիրող իրավիճակը, ուր Ռուսաստան արտահանման համար նախատեսուած հարկերու ինքնաշարժներ կայանուած: Այստեղ են նաեւ տասնեակ ռուս առեւտրականներ, որոնք ինքնաշարժներ կ'ընտրեն հայրենիքի մէջ գտնուող իրենց յաճախորդներուն համար:

«Ռուսաստանի մէջ բոլոր սրահները՝ BMW, Audi, բոլորը փակուած են: Եթէ նախապէս հարուստները պարզապէս կը

մտնէին սրահ եւ ինքնաշարժ կը գնէին, ապա այժմ անոնք զրկուած են այդ հնարաւորութենէն: Այդ է պատճառը, որ այդ մարդիկ այժմ կը դիմեն մեր օգնութեան», թերթի թղթակիցին հետ զրուցին ընթացքին կ'ըսէ կիւմրի մէջ գտնուող ռուս միջնորդներէն մէկը:

Տարբերութիւնը, սակայն, այն է, կը գրէ "Financial Times"-ը, որ Հայաստանի տարածքով Ռուսաստան հիմնականին մէջ ոչ թէ նոր արտադրուած, այլ արդէն իսկ օգտագործուած ինքնաշարժներ կ'արտահանուին:

«Ինքնաշարժները Միացեալ Նահանգներէն կը ժամանեն Վրաստանի մէջ գտնուող Փոթիի սոժոժովեան նաւահանգիստ: Ներկրուած միջնաշարժներէն շատերը հետագային կը տեղափոխուին Հայաստան՝ մաքսագերծման համար: Այս քայլին իմաստը այն է, որ Հայաստանը Ռուսաստանի հետ նոյն մաքսային միութեան անդամ է, ինչ որ թոյլ կու տայ Հայաստանի մէջ մաքսագերծուած ինքնաշարժները, կրկին Վրաստանի տարածքով, արտահանել Ռուսաստան՝ առանց կրկնակի մաքսագերծման», կը նշէ պարբերականը:

Հայաստանի տնտեսութեան վրայ, ըստ հրապարակման հեղինակներուն, այս մեխանիզմը դրական կ'ազդէ, սակայն մէկ թերութիւն ունի՝ այն, ըստ էութեան, Արեւմուտքի կողմէ Ռուսաստանի դէմ սահմանուած պատժամիջոցներու շրջանցման մեխանիզմ է:

Ժերու նախարար Արարատ Միրզոյեան, գնահատելով իրանի դերքորոշումները կովկասեան տարածաշրջանին մէջ տեղի ունեցող զարգացումներուն վերաբերեալ, յայտնած է, որ Հայաստանը երբեք հարթակ պիտի չդառնայ հակաիրանեան գործողութիւններուն համար եւ մշտապէս շեշտը կը դնէ տարածաշրջանային անվտանգութեան եւ խաղաղութեան ընդլայնման վրայ», կ'ըսուի իրանեան կողմի պաշտօնակազմի հարդրագրութեան մէջ:

Իրան Զընդունի Տարածաշրջանի

Շարունակուած էջ 1-էն

լոր երկիրներու ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան», իրանի նախագահին մամուլի ծառայութեան փոխանցմամբ՝ յայտնած է Իպրահիմ Ռախիսին:

Ռախիսին ընդգծած է նաեւ հայ-իրանեան յարաբերութիւններու բարելավման կարեւորութիւնը եւ յաւելած, որ այդ հարցին մէջ թեհրանը որեւէ խոչընդոտ չի տեսներ:

«Հայաստանի արտաքին գոր-

Քանի Դեռ Պայմանագիրը Ստորագրուած Չէ

Շարունակուած էջ 1-էն

ւելուցած է վարչապետը:

«Ընդհանրապէս քանի դեռ խաղաղութեան պայմանագիր ստորագրուած չէ, եւ այդ պայմանագիրը վաւերացուած չէ երկու երկրներ խորհրդարանների կողմից, պատերազմն, ի հարկէ, շատ հաւանական է: Եւ ընդհանրապէս ցանկացած տեղում, երկրագնդի վրայ, որտեղ կայ կոնֆլիկտային իրադրութիւն, որը լուծուած չէ պայմանագրով, այսինքն հասցէագրուած չէ, ցանկացած տեղում, ցանկացած պահի կարող է պատերազմ լինել, սա պէտք է արձանագրել», - ըսած է վարչապետ Փաշինեան:

Հասկանալի է, որ Ռուսաստանը չէ բաւարարած Հայաստանի սպասելիքները պատերազմի ժամանակ եւ անկէ յետոյ: Ինչպէ՞ս Դուք կ'արդարացնէք Ռուսաստանի հետ սերտ կապերը կամ վստահութիւնը, հարցուցած է լրագրողը Փաշինեանին:

Պատասխանելով վարչապետը հարց տուած է, թէ նոյն հարցը կարելի է տալ որեւէ այլ երկրի մասին՝ «Ինչպէ՞ս էք Դուք արդարացնում որեւէ ուրիշ երկրի հետ լաւ յարաբերութիւններն այն պայմաններում, երբ Լեռնային Ղարաբաղում խախտուած են մարդու իրաւունքները, հումանիտար ճգնաժամ է, էթնիկ գտումներ են նախապատրաստուած, իսկ այդ երկրները պատշաճ ռեակցիայ չեն տալիս»: Փաշինեանը շեշտած է, որ երկրները, որոնց հետ նոյնիսկ լաւ

յարաբերութիւններ ունին, առաւելագոյնը չեն ըներ, որպէսզի Լեռնային Ղարաբաղի մէջ մարդասիրական ճգնաժամը չաղթահարուի՝ ամենատարբեր պատճառներով:

«Մէկը կազ է գնում, միւսը նաւթ է գնում, երրորդն իր բանկային համակարգի մասին է մտածում, չորրորդն այլ ինդիքներ ունի, բայց որ միւս կողմից էլ ասես ոչինչ չեն անում՝ այդ էլ ճիշտ չէ», - աւելցուցած է վարչապետը:

Այսօր Լեռնային Ղարաբաղի մէջ Ատրպեյճանը կեթօ կը ստեղծէ, ըսած է Փաշինեան, շարունակելով. - «Ռուսաստանը մեզ էլ ասում է՝ այդ է ձեր ակնկալիքն Արեւմուտքից, որ այդքան սերտ յարաբերութիւններ էք հաստատում Եւրամիութեան հետ, միւս գործընկերների հետ, ձեր ակնկալիքն այդ էր, որ ենթադրենք շաբաթը մի անգամ կ'ասեն՝ Լաչինի միջանցքը պէտք է բացուի, շնորհակալութիւն, ցատկոթիւն: Ինչպէս Արեւմուտքի հետ ենք մեր յարաբերութիւններն արդարացնում, նոյն կերպ էլ Ռուսաստանի հետ, ինչպէս Արեւմուտքի որոշ շրջանակների տրամաբանութեամբ են մեր յարաբերութիւնները չարդարացուած Ռուսաստանի հետ, որովհետեւ Ռուսաստանն իր ոչ բոլոր պարտաւորութիւններն է կատարում եւ ոչ բոլոր ակնկալիքներն է մեր բաւարարում, նոյն էլ Ռուսաստանը մեզ ասում է Արեւմուտքի մասին», «Ֆրանս-Փրես»-ի հետ հարցազրուցի ընթացքին ըսած է Հայաստանի վարչապետը:

Պետութեան Ընկալման Հետ Իսկական Աղերս Զունեցողները

Շարունակուած էջ 1-էն

թեան մէջ տակաւին թարմ են քառօրեայէն ետք Սերժ Սարգսեանի չքմեղանքի խօսքերը թէ, Հայաստանի բանակը կը կռուէր 80-ականներու զենքերով: Թէ ի՞նչու այդպէս էր, մինչեւ օրս այդ հարցին պատասխանը չտրուեցաւ:

Այդ թուականէն անմիջապէս ետք պէտք էր սկսիլ բանակաշինութեան լայնածաւալ արշաւ եւ 80-ականներու զենքերը փոխարինուէին արդիական զենքերով, սակայն այդ ալ տեղի չունեցաւ: Ամէն անգամ երբ կը հաղորդուէր Ռուսաստանի կողմէ Ատրպեյճանին վաճառուող նոր զինատեսակներու մասին, օրուայ իշխանաւորները կը բաւարարուէին բողոքներով, որոնց Ռուսական կողմը կը պատասխանէր ըսելով՝ «Եթէ մենք չվաճառէք ուրիշներ պիտի վաճառեն»:

Այ՛ո 80-ականներու զենքերը մնացին Հայկական բանակներու զինանոցին մէջ, որուն հետեւանքով ալ վճռուեցաւ 44-օրեայ պատերազմի ճակտագիրը:

Նման բովանդակութեամբ ցամակ գրող մարդը, երկու շրջան կեղծուած ընտրութիւններով նա-

խագահի աթոռին նստելէ ետք կը յանդգնի մեղադրելու Հայաստանի ժողովուրդին՝ սխալ ընտրութիւն կատարելու մէջ, ու տակաւին կը մտածէ իշխանութեան վերադառնալու մասին: Ան մինչեւ հիմա եզրակացուցած պէտք էր ըլլար որ, Հայ հասարակութիւնը ոչ թէ «յուզական որոշում կատարեց», այլ զգուանքի որոշում: Չզուանք իր ապրած պայմաններէն, կորումպացուած համակարգէն, ընտրական կեղծիքներէն, զգուած տնտեսական մենաշնորհներէն ու տակաւին շատ այլ բաներ: Այլապէս, ինչպէ՞ս բացատրել, որ յուզական որոշում կատարած ժողովուրդը վերընտրեց «պատերազմ պարտուած» ղեկավարին եւ ոչ թէ Ռուսերը Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի նման ապաշնորհ գործիչներու, որոնք քսան տարի շահագործեցին Արցախն ու անոր ժողովուրդի անունը, իշխանութեան վրայ մնալու համար:

Պատմութիւնը պիտի որոշէ թէ, որո՞նք էին պետութեան ընկալման հետ որեւէ աղերս չունեցողները ու այդ պարագային Սերժ Սարգսեանի անունը պիտի գրուի ցանկին ամենէն վերելը:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Մանուշեան կը Փոխադրուի Պանթոն, Յապա Փարամազը՞

ԱՐԻՍ ՊՈՏՈՏՈՂԱՏ


Անցեալ ամիս, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն յայտարարեց, որ Ֆրանսական դիմադրական շարժումի հերոսներէն Միսաք Մանուշեանի անունը յառաջիկայ տարի պիտի փոխադրուի անուանի անձնաւորութիւններու թաղուած պանթոն:

Երբ այս լուրը իմացայ, յիշեցի Փարամազը եւ ընկերները: 108 տարիներ առաջ, 1915 թուին 15-ին Պայագէտի հրապարակի վրայ հայ յեղափոխական շարժումի քսան գործիչներ կախողան հանուեցան: Անոնք մօտաւորապէս մէկ տարի առաջ ձերբակալուած Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան անդամներն էին:

Մէկ կողմը Ֆրանսական դիմադրական շարժումի անդամներէն Միսաք Մանուշեան, իսկ միւս կողմը Հայ յեղափոխական շարժումի անդամներէն Փարամազ կամ մկրտութեան անունով Մատթէոս Սարգիսեան: 1915-ը, մէկը տարաւ Ատրլամանէն դէպի Փարիզ, իսկ միւսը դէպի մահ:

Երկուքն ալ դիմադրական շարժումներու գործիչներ էին: Աւելի ազատ, աւելի հաւասար եւ եղբայրութեան մէջ ապրելու համար ջանք թափած էին: Երկուքն ալ սոցիալիստ-ընկերավարական:

Մանուշեանը գաղթական մկն



էր, որ նացիներու բռնակալութեան դէմ պայքարեցաւ: Փարամազը պայքարեցաւ իր ազգին հարազատ հողին վրայ բարեկեցութեամբ եւ այլ ժողովուրդներու հետ հաւասար ապրելուն համար:

Երկուքն ալ մահապատժի դատապարտուեցան:

Փարամազը կախողան հանեցին իր տանը ընկերներով: Իսկ Մանուշեանը գնդակահարուեցաւ իր քսաներկու ընկերներով:

Մանուշեանը Ֆրանսայի համար դարձաց է ազգային հերոս

նահատակ: Կը յիշուի մեծ յարգանք եւ պատիւով:

Բացի Ֆրանսական պետութենէն, աշխարհի հայերն ալ կը յիշեն զինք: Ֆրանսայի եւ Հայաստանի քաղաքներուն մէջ իր անունը կրող հրապարակներ կամ փողոցներ, այն փողոցները զարգարող յուշարձաններ տեղադրուած են:

Դառնալով Փարամազին, անոր գերեզմանը անյայտ է: Թաղման ականատես քահանան Տ. Գալուստ Պօղոսեանը կը վկայէ.

»..... Էտիրնեգաբուի Հայոց

գերեզմանատան պատին դուրսի կողմը, հասարակաց փոսի մը մէջ կը հանգչին անոնք, համաձայն Աչըքպաշի կտակին, եղբայրական բունով մը: Չկայ շիրիմ, չկան ծաղիկներ, որովհետեւ անոնք չքալեցին ծաղիկներու վրայէն, այլ նախընտրեցին փշոտ ճամբան եւ պէտք չունին ծաղիկներու:

Ուխտի վայր մըն է անիկա ընկերներու համար, մինչեւ այն օրը, երբ այդ նուիրական անունները կը փոխադրուին հայրենի հողին վրայ, ազատագրուած ամէն տեսակ բռնութիւններէ «:

Մենք չենք կրցած շիրիմ մը, համեստ յուշարձան մը գետեղել քերեզմանատան մէկ անկիւնը:

Մանուշեան իբրեւ բանաստեղծ՝ »Իմ Երգը« գիրքին մէջ բանաստեղծութիւնները անփոփոխած է:

Փարամազն ալ կը գրէր: Ուզեցի զինք վերջի շէջ բանտարկութենէ քանի մը ամիս առաջ Մայիս 1914-ին »Հնչակ« թերթին մէջ գրած »Հայի Պահանջը« գրութիւնով:

Այս գրութիւնը ով երբ ալ կարդայ կրնայ դասեր քաղել: Եթէ հայ մը կարդայ կրնայ տեսնել ինչպէս դարձած է դարերու մէջ իր պահանջներուն ետեւէն կախողան քալած ազգէ մը, ձեռք ուզողին թեւը նուիրող ազգի:

«ԱԿՕՍ»

Հայի Պահանջը - Գրեց՝ ՓԱՐԱՄԱԶ

Նորից հիասթափուեց հայը: Նորից յուսախաբուեց ինքը: Նորաւոր վշտերի պատմութեան մի օղակը դարձաւ:

Պալկանեան պատերազմը իր յետեւից բերաւ Ռուսիայի ազատուած իսթանպուլի դարաւոր լծից: Անջատուեց Մաքեդոնիան, անջատուեց Եպիրոսը եւ լեռնական Ալբանեան ստանալով ինքնուրոյն գահը՝ եւրոպացի թագաւորով: Կատարուեց այն ինչ որ պատմական անհրաժեշտութեամբ պիտի զարբախտը որոշելու այն կառավարութեան, որի միակ ձգտումն է եղել եւ է իր հպատակները ճորտեր ստեղծել, իր եսթաղանի տակ ունեւանների պարտակատար, հլու հօտեր պատրաստել, եւ միջոցը այդ ձգտման աւեր, կոտորած, զուլում:

Ազատուեց Ռուսիայի ազգաբնակչութիւնը, իսկ «Ատանաները»՝ Հայի մարտիրոսագրութեան ապրթէոզը, դարձեալ մնաց կայուն, անշարժ վիճակի մէջ:

Եւ նորից նոյն վիշտը, նոյն գալարումները

Դեռ երէկ էր, հայ ֆէտային հրաժեշտ տալով Մարտիկի, Չաքարեանի ըմբոստ ոգիներին, զէնքը թողեց, «Սահմանադրութիւն, հիւրընդուն, ատալէթ, մուսաւաթ, ուխտով վէթ» ստուերանկարի տակ դաշտ իջաւ, մշակոյթի գործիքները աւաւ, իր քանդուած տունը, իր անթեղուած օճաղը վերաշինելու, կեանքի հրճուանքը ճաշակելու:

Դեռ երէկ էր, հայը տանջուած համիտեան ուժիմից, փարեց «Սահմանադրութեան» եւ մոռացութեան տալով հրէշային խժոժութիւնները, նուիրուեց երկրի վերաշինութեան, վերածննդեան շինարար գործին:

Սխալուեց հայը, սխալուեց արդեօք յանդուգն ֆիտային, երբ «Սահմանադրութիւն»ից յետոյ զէն-

քը վայր դրեց քայքայուած երկիրը վերամշակելու մտքով:

Մեր առջեւն է պատմութիւնը՝ ժահրոտ, մուսլ, դժոխային հայի այսօրուան պատմութեան շարունակութիւնը, ճիշդ յար եւ նմանը նախկինի, իր դարաւոր վշտերի, իր հողու փլուզումների, իր աւեր ու կոտորածի:

Այո՛ սխալուեց հայը պատմական անորակելի սխալով: Սխալուեց հայ ֆետային, երբ ոգեւորութեան ազդեցութեան տակ կարողացաւ ինքնիրեն հաւատացնել, թէ Օսմանեան տիրապետութեան տակ, նեղցած ու գձուձ շովինիզմով եւ իսլամական անհամբերատար աշխարհայեացքով կարող է պաշտպանուել բաղկացուցիչ ազգերի շահը՝ տնտեսական, հոգեկան, մտաւոր:

Սխալուեց հայը, երբ «Միտահատեան Սահմանադրութեան» մէջ տեսաւ իր վշտի, իր նեղութեան ու ուժասպառման վերջնակէտը: Այն «Սահմանադրութեան», որը իր էութեամբ մի գրգռիչ ազդակ է տիրող պետութեան աստուած պետական՝ Զիլլը Ուլահութեան, ձգտումներին եւ հպատակ ժողովուրդների ստորադասման՝ էմանէթ Ուլլահի վիճակի փոխարարութեան մէջ բռնօրէն պահելու համար:

Վեց տարուան իր գոյութեան ընթացքում, նա՝ «Սահմանադրութիւն»ը իր ներքին տրամասութեան պատճառով ոչ մի ընդունակութիւն, ոչ մի տրամադրութիւն ցոյց չտուեց մասնադրելու ժողովուրդների ձգտման համապատասխան ղեկավար ուժեր, վարչական մեքենան առաջ տանելու համապատասխան կառավարիչներ: Ընդհակառակը՝ կանգնած շովին ու մոլեռանդ հասկացողութեան վրայ, նրա վարչական առաջնորդները, սկսած

փտածութեան օճաղ Բարձր Դրան եպարքոսից (քաղաքապետին) մինչեւ վերջին գիւղի յետին միւտիրը (տիօրէնը), պետութիւնը կազմող տարրերի մէջ իրար յօշոտելու, իրար ծուէն ծուէն անելու սերմերը ցանցցին, նրանց կենսագրելու ճիգ ու գործունէութիւնները ունեցան: Ատանան, Հաւրանը, Սանաան մեր առջեւ են՝ «Սահմանադրութեան» այդ ողջակէզները:


Քաւութեան նոխագներ թուրք ազգայնամոլութեան: Զոհը էնվէրի, զոհը Թալէթի, զոհը Հազար եւ այլ եպարքոս, նախարար փաշաների, պէյերի:

Եւ ի գուր չասաց սահմանադրական Ալի Բեմալ թրքութեան գաղափարաբանը, իտէոլոկը.

«Իսլամ թուրքը գաղափարական միացումի գործիքն է, նա կը տրորէ կամքերը վերջ կը դնէ ազգութիւններին, նրանց կը շողախի եւ կը դնի հաւասարութեան մակարդակի վրայ»:

Այլեւս ինչ բացատրութիւն: Պապիկեանի արիւնով գրուած Տեղեկագիրը սրանց Post Scriptum-ն է:

Տարուած սոյն երեւակայական յղացումներով, ազգայնամոլական հակապատմական տենչերով, այս վեց տարուան ընթացքում նա՝ «շէրիաթական Սահմանադրութիւն»ը անազգակ եղաւ գծելու եւ գործադրելու մի օրէնք, որ նպաստաւոր պայմաններ տար ազգաբնակչութեան՝ իր պատուի, իր մալ ու միւլքի տէրը դառնալու, իր հանդի մէջ ծածկի տակ ապահովութիւն տեսնելու, իր հոգեկան վայելքները ճաշակելու: Ընդհակառակը տարուած Միլլէթը-Հաքիմէի ցաւազար երազանքով հեքմէթի-հիւքմէթի մտայնութեան որոնումներով, համիտական եւս առաւել անբարոյ, նախատալից ուժիմով, մանաւանդ Հայութեան հա-



մար, շէրիաթական տրամադրութիւններ ստեղծագործեց ու գործադրեց ազգերի կենսունակութիւնը քամելու, քաղաքակրթութեան, յառաջդիմութեան, բարեխառութեան ազգակները տրորելու «հաւասարութեան մակարդակի վրայ դնելու»: Օրէնքը «Օսմանլիութեան Սահմանադրութեան» ձեռքին մի գործիք դարցաւ սահմանադրական ազգերը ջնջելու: «Հայերին միայն մնում է պահանջել ու գանգատիլ, իսկ մեր գործն է ու պիտի լինի նրա խնդիրները մերժել ու իրեն էլ հարուածել»: Այսպէս է ասում Պիթլիսի դատարանապետը իրեն դիմող բողոքարկու հային: Այսպէս է խօսում օրէնքի հսկողը, օրէնք բացատրողը, օրէնքի հայրը:

Պէտք է իրեն էլ հարուածեն

Եւ օրէնքը խլում է հայի հողը, հայի աղջիկը, հայի ազգութեան ստորագրութիւնները՝ դպրոց, եկեղեցի, մամուլ, այն էլ այսօր այն, հէնց այսօր, երբ արտաքին ճնշումների տակ ստիպուած ստորագրում է

Հայի Պահանջը Գրեց՝ ՓԱՐԱՄԱԿ

Շարունակում է 8-էն

Հայաստանի բարենորոգումները:

«Հայաստանի բարենորոգումները» գաւազան է դա այն շարան - շարան կոտորածի, թաւանի, հրդեհումի, առեւանգման հողագրկութեան, որը հայ իրականութեան պատմութեան մէջ իր բոսոր արիւնով արձանագրուած է ՀԱՅԻ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԻԻՆ վերտառութեամբ եւ որի դերակատարն է թուրք բռնապետութիւնը եւրոպական շահամոլ կառավարութիւնների ու ժողովուրդների հակադրութեան տակ:

«Հայկական բարենորոգում» դա վաւերագրութիւնն է տիրապետող տարրի անսանձ գործողութեան իրաւասութեան, իր նախնիների մէջ անպատասխանատու մնալու: Դա Օսմանեան կառավարութեան իրերի դրութիւնից մի կերպ ձեռքբերողութիւնն է: Դա բաժան-բաժանում է հայի հայրենիքի՝ Հայաստանի, յօշոտումը հայկական հարցի:

գործունեւն են, որոնք տանջանքով կռուած, արիւնով գոգուած՝ կազմել են հայի մեծ կամքը՝ նրա հաստատութիւնների ամբողջութիւնը: Հայը գիտէ իր վիշտը արտա-յայտել փրկութեամբ, իր ուրախութիւնը՝ բանաստեղծութիւնը, հիւսել է Արտաւազդի շրթանների կողմ դարբինների բարոյավէպը, ծառայել է երեսուն տարի Համիտի եւ նրա ութիմի դէմ, յատկութիւններ, որոնք նոյնիսկ որպիսի ասել են տալիս մեզ թէ նա՝ հայը, պատրաստ է ու կարող է մեռնիլ իր հաստատութիւնները պահել-պաշտպանելու եւ զարգացնելու համար:

Եւ նա շատ է մեռել

Ի թիւի հատ-Գերմանական «բարենորոգումները» հայութիւնը բնաջնջելու նորագոյն այդ որոգայթները, նրա բնական ձգտման առարկան չեն: Նա իր ստեղծած հաստատութիւնները սրբազրել գիտէ իր արիւնով եւ

միայն ընդունակ են երաշխաւորելու մեր կեանքի, կայքի, գոյքի եւ ազգովին ապրելու պայմանները: Եւ հայը իր միջոցները չպիտի խնայէ մինչեւ չստանայ իր բաղձանքների իրական արժէքը՝ Հայաստանի տեղական ինքնավարութիւն լայն ռամկավար կարգերով:

րօրեայ այս տարիները նաեւ շատ նման են Մեծ Եղեռնի եւ անոր յաջորդած օրերուն, այն առումով, որ միջազգային ընտանիքը՝ բոլոր մեծ ուժերը անխտիր, վերստին վերածուած են խուլի եւ կոյրի՝ նոյնիսկ մեր բարեկամը համարուողները, ներառեալ քրիստոնեայ պետութիւնները, որոնք աչք խփեցին եւ կը շարունակեն խփել ատրպէյճանական ոճիրներուն դիմաց՝ սկսեալ 44-օրեայ պատերազմէն մինչեւ Լաչինի միջանցքի արգելափակումը եւ արցախցիներուն նկատմամբ ցեղային գոտմի դրսեւորումը: Այդ միջազգային ուժերը 20-րդ դարու առաջին շրջանին անտեսեցին ազգի մը վտարումը իր պապենական հողերէն, ճիշդ այնպէս, ինչպէս կը պատահի Արցախի մէջ այսօր՝ մեր օրերուն:

Սահմանային բացայայտ ոտնձգութիւններ, Արցախի դէմ վայրագ պատերազմ, հազարաւոր նահատակներ, հայկական տարածքներու նկատմամբ բաց ախորժակ, հարիւրաւոր գերիներ, համաձայնութիւններու դրժում եւ ամէնօրեայ թշնամական հռետորաբանութիւն ու ռազմական սպառնալիքներ Հայաստանին, Արցախին եւ հայ ժողովուրդին նկատմամբ: Այս ամէնը կը պատահի միջազգային ընտանիքին աչքին առջեւ, սակայն միեւնոյն լուրջութիւնն է, ինչ կար Յեղասպանութենէն առաջ եւ անոր ընթացքին եւ անկէ յետոյ: Նաեւ զարմանալի անտարբերութեամբ հանդէս կու գայ մեր, այսպէս կոչուած, ռազմավարական դաշնակից Ռուսիան:

44-օրեայ պատերազմը ցոյց տուաւ, որ Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսիոյ Դաշնութիւնը չի կրնար աջակցիլ մեզի, մանաւանդ երբ ան միւրճուած է Ուքրաինայի պատերազմին մէջ եւ հազարամէկ կախուածութիւններուն թուրքիոյ հետ: Արեւմուտքը իբր կ'ուզէ միջնորդ օժանդակող ըլլալ գալիք խաղաղութեան պայմանագրի կնքման, սակայն մենք գիտենք, որ անոր իսկական նպատակը Արցախի ժողովուրդի ինքնորոշման սատարելը չէ, այլ Ռուսիան տարածաշրջանէն դուրս մղելն է:

Հետեւաբար մենք կը գտնենք, որ Հայաստանի լաւագոյն ընտրանքը ոչ ամբողջութեամբ Արեւելքն է, ոչ ալ ամբողջութեամբ Արեւմուտքը, այլ հայամէտ եւ բազմաբեւեռ քաղաքականութիւն վարելն է: Այդ բազմաբեւեռ քաղաքականութեան եւ միջազգային երաշխաւորներու օժանդակութեամբ եւ աջակցութեամբ պէտք է փորձենք հասնիլ Արցախի հայ բնակչութեան ինքնորոշման իրաւունքի եւ իր պապենական հողերուն վրայ ազատ ապրելու որոշումի իրականացումին:

Յարգելի՛ բարեկամներ, Խաղաղութիւնը Հայաստանի համար ռազմավարական ընտրանք է: Միայն խաղաղութեան եւ դրացիներուն հետ բնականոն յարաբերութիւններու պայմաններուն մէջ Հայաստան կը զարգանայ եւ կը բարգաւաճի: Իսկ խաղաղութիւնը պահելու եւ պաշտպանելու համար մեր հայրենիքը պէտք է ունենայ գերարդիական եւ հզօր բանակ: Ուստի մեր երկրորդ հրամայականը Հայոց Բանակի վերագիւնումն ու վերկառուցումն է: Ձիւղ է, որ վերոնշեալ կէտերը մեր այժմէական եւ հրատապ հարցերն են այսօր, սակայն մենք երբեք պիտի

չզլանանք մեր անժամանցելի դատի հետապնդումէն, քանի որ մեր անցեալն ու ներկան իրարու հետ սերտ կապուած են, գործ ունինք նոյն առաւելապաշտ եւ ծաւալողական ախորժակներ ունեցող համաթուրանական ծրագրի ամենածայրայեղ ներկայացուցիչներուն հետ:

Սիրելի՛ ներկաներ, Գալով Սփիւռք՝ ցաւով կը նկատենք, որ եթէ Հայաստանի մէջ յառաջացած իշխանութիւն-ընդդիմութիւն լարուածութիւնը եւ անհանդուրժողականութիւնը թափանցէ Սփիւռք եւ արմատանայ, ապա ի՞նչ պիտի ըլլայ մեր ժողովուրդին վիճակը, ի՞նչ տեսք պիտի ստանայ Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը, որով կը հպարտանայինք անցնող տասնամեակներուն:

Վերաւոր Արցախով, տկար Հայաստանով եւ պառակտումի նախանշաններ ցոյց տուող Սփիւռքով, վստահ եղէք անհնար պիտի ըլլայ յաղթահարել գալիք փորձութիւններն ու մարտահրաւէրները:

Յարգելի՛ հանդիսականներ, Մենք այստեղ չենք փորձեր ճիշդի ու սխալի պիտակաւորում ընել, այլ պարզապէս ահազանգ կը հնչեցնենք եւ պատրաստ ենք նոյնիսկ գործնական առաջարկներու՝ մօտեցնելու համար տեսակէտները: Համոզուած ենք, որ թէ՛ ընդդիմութեան, թէ՛ իշխանութեան նպատակը հայ ժողովուրդին բարօրութիւնն է, այնպէս ինչպէս իւրաքանչիւր ազնիւ հայու փափաքն է տեսնել հզօր Հայաստան, անկախ Արցախ եւ կազմակերպուած Սփիւռք: Հետեւաբար, տեսակէտներու մերձեցումը կը պահանջէ հետապնդում, առանց նախապաշարումներու յարգալից երկխօսութիւն: Այսօր, այս բեմէն կը յայտարարեմ, թէ ՄԴՀԿ-ը պատրաստ է ստանձնելու այդ պարտականութիւնը, եթէ իրմէ պահանջուի:

Այսօր Քսանները մեզի կը պատգամեն.

1.- Ինչպէս 108 տարի առաջ անոնք իրենց խորթափանցութեամբ կրցան կանխատեսել գալիք արհաւիրքը, մեզի կը հրամայեն կառչիլ պետականութեան, հեռու մնալ ամէն տեսակի այլամերժական հռետորաբանութեան, եւ անհնարինը ընել՝ պահելու ազգին միասնականութիւնը ի Հայաստան, Արցախ եւ սփիւռս աշխարհի:

2.- Սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ դիմադրել թուրքազերիական քաղաքական ներթափանցումին, հակադրել անոնց քարոզչութեան եւ ստեղծել հայաստապատ հանրային կարծիք, ճիշդ ներկայացնել Արցախի հայ բնակչութեան իր բազմադարեայ հողին վրայ ապրելու եւ ինքնորոշուելու իրաւունքը:

3.- Աշխատիլ հայրենի պետականութեան վարկանիշը բարձր պահելու յաջա մեր երկիրներու համաքաղաքացիներուն, հայրենիքի մէջ իշխանութեան հանդէպ մեր համոզումներէն եւ դիրքորոշումներէն անկախ:

4.- Ամէն առիթով բարձրաձայնել Ատրպէյճանի եւ անոր դաշնակից Թուրքիոյ իշխանութիւններուն՝ Արցախի մէջ վարած ազգային գտման եւ ցեղասպանական քաղաքանութիւնը:

Յարգելի՛ բարեկամներ, Պահճ օրհասական է, ամէն մէկ սխալ քայլ կրնայ ճակատագրական

Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի Յիշատակին



ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի անուան առաջին անգամ հանդիպեցայ 1974-ին, երբ որպէս Պէյրութի Հայկազեան համալսարանի պատմագիտութեան բաժնի ուսանող, պրպտուսներ կ'ընէի ուսումս UCLA-ի մէջ կատարելագործելու կարելիութեանց մասին: Սակայն հագիւ համալսարանը աւարտած, ծագեցաւ Լիբանանի քաղաքացիական պատերազմը եւ փոխուեցաւ կեանքիս ընթացքը, զիս տանելով Սէուտական Արաբիա, փոխան ԱՄՆ-ի: 1989-ին, երբ արդէն ընտանիք կազմած հաստատուեցանք Պըրպէնք քաղաքին մէջ, շուտով առիթը ունեցայ ծանօթանալու իր հետ:

Տարիներու ընթացքին աճեցաւ մեր մտերմութիւնը, երբ ես սիրով ներկայ կ'ըլլայի իր կազմակերպած բոլոր գիտաժողովներուն, իսկ ինք կը բարեհաճէր մասնակցել իմ պատկանած Նոր Սերունդ Մշակութային Միութեան կազմակերպած գիտաժողովներուն: Մեր մտերմութիւնը աւելիով աճեցաւ, երբ բազում անգամներ զինք հիւրընկալեցի «Նոր Սերունդ» հեռուստաժամի շաբաթական յայտագիրներուն վրայ, ընդհանրապէս քննարկութեան նիւթ ունենալով Հայաստանի Գ Հանրապետութեան զարգացումները: Այս ուղիդ եթէր յայտագիրներու ընթացքին է, որ կարգ մը մարդիկ կը փորձէին ձեռնարկել կատարել իր հրատարակած գործերուն վրայ, նոյնիսկ խեղաթիւրելով իր գրութիւնները եւ իրեն վերագրելով հաստատումներ, որոնք ինք չէր կատարած: Ան միշտ բանհամբոյր, բայց բազմանշանակ ժպիտով կ'ընդունէր եւ կը պատասխանէր այդ հարցերուն:

Երբ բաղդատականներ կ'ընէինք Հայաստանի Ա. եւ Գ. Հանրապետութեանց զարգացումներու մասին եւ իր ուշադրութեան կը յանձնէի օրինակներ, երբ նոյն եղելութիւնը հակոտնեայ մեկնաբանման կ'արժանանար, մեկնած անձին կանխակալ մտեցումներէն, այդ նոյն բարեհաճութեամբ ժպիտով կը բացատրէր, թէ որքան դժուար է անկողմնակալ ըլլալ ու չենթարկուիլ աջի ու ձախի ճնշումներուն: Չմոռնանք, որ մանաւանդ մեր վերջին հարիւրամեայ պատմութիւնը աւելի այս կամ այն կողմի գործունէութիւնը արդարացնելու պատմութիւն եղած է, քան՝ դէպքերու քննական վերլուծութեամբ մեր իսկական պատմութեան մատուցումը: Անկողմնա-

կալ պատմաբանը դժբախտաբար միշտ ալ քարկոծուած է աջին ու ձախին, բայց ի վերջոյ ան կ'արժանանայ բոլորի յարգանքին, երբ կը փաստուի իր տեսակէտներուն ճշմարտացիութիւնը:

Երբէք չեմ մոռնար դէպք մը, որ կրնար անհաճոյ հետեւանքներ ունենալ: Իր կազմակերպած դասախօսական ելոյթներէն մէկուն ընթացքին, որ տեղի ունեցաւ UACC եկեղեցւոյ յարակից սրահին մէջ, կը քննարկուէր Հայաստանի այդ ժամանակուան կրթական նախարար Աշոտ Պլէյանի առաջարկած կրթական ծրագիրը, ուր ի միջի այլոց, կը նշուէր երեխաներուն չղասաւանդել եղեռնի արհաւիրքներու մասին, խուսափելու համար անոնց մատուցելու ուղեղներուն վրայ հոգեբանական անյարկի ազդեցութիւններէ: Երբ հարց-պատասխանի ժամանակ խօսք առնելով նշեցի իրական օրինակ մը եւ մասամբ արդարացի գտայ Պլէյանի մտեցումը, հանդիսական մը վազեց իմ կողմը եւ ըստ երեւոյթին կը պատրաստուէր հարուածել զիս ... եթէ չըլլար Փրոֆեսորի սաստուածը:

Մեր վերջին հանդիպումը կայացաւ այս տարուան Փետրուար 5-ին, Պոլսահայ Միութեան սրահին մէջ, ուր Հրանդ Տինքին նուիրուած երեկոյի գլխաւոր բանախօսն էի: Երբ սրահէն ներս մտաւ իր գաւազներէն Արմէնի հետ, ընդառաջեցի դիմաւորել զիրենք: Իր այդ նշանաւոր ժպիտը դէմքին, ինձի ըսաւ. «Քեզի համար եկայ»: Անակնկալի եկայ այդ գովասանքէն ու միայն կրցայ խորին շնորհակալութիւնս յայտնել իրեն: Յաջորդ օրը ել-նամակով դարձեալ շնորհակալութիւններս յայտնեցի իր ներկայութեան համար, որուն ի պատասխան գրեց. «Հակառակ յայտագրի թեքնիք թերիներուն, երեկոն փրկեցիր, յաջող...»: Մեր վերջին նամակագրութեամբ, Ապրիլ 12-ին, իրմէ կը խնդրէի շնորհաւորութիւններս փոխանցել իր դուստրին՝ Անիին, անոր պատրաստած ու ներկայացուցած վաւերագրական հիանալի ժապաւէնին համար, նուիրուած Քըրր ընտանիքի աւանդին: Կը գրէի, որ այդ ժապաւէնը ազդեցիկ տպաւորութիւն պիտի գործէ ամերիկեան շրջանակներու վրայ եւ ծանր հարուած կը հասցնէ եղեռնը ուրացողներու ջանքերուն: Իր պատասխանին մէջ շնորհակալութիւնս յայտնելով կ'ըսէր, որ գրութիւնս մեծ նշանակութիւն պիտի ունենայ Անիին համար, որ բարե-

Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի Յուղարկաւորութիւնն ու Թաղուը

Անցեալ Չորեքշաբթի, 19 Յուլիս, 2023, երեկոյեան ժամը 7:00ին խուռներամ բազմութեան մը ներկայութեամբ, Մոնթեպելլոյի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ կեանքէն հեռացած աշխարհահռչակ գիտնական, Հայաստանի ակադեմիայի ակադեմիկոս փորձեսոր Ռիչըրտ Յովհաննիսեանի յուղարկաւորութեան եկեղեցւոյ կարգը, նախագահութեամբ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի: Ան այս առթիւ կարդաց Ամենայն Հայոց Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. կաթողիկոսի ցաւակցական հեռագիրը: Իսկ Մուշեղ Արք. Մարտիրոսեան կարդաց Մեծի Տանն կրիկիոյ կաթողիկոս Արամ Ա.ի ցաւակցական, կարգացուցեալ նաեւ Թորգոմ Եպս. Տօնոյեանի յղած ցաւակցական գրութիւնը:

Մտի խօսքերով ելոյթներ ունեցան հանգուցեալի անմիջական հարազատները: Բոլոր դամբանախօսներն ալ բարձր գնահատեցին Ռ. Յովհաննիսեանի մեծ վաստակն ու անկորնչելի ներդրումը եւ յատկապէս կոթողային քառահատոր աշխատութիւնը՝ Հայոց պատմու-

թիդն եւ երկար ժամանակ տրամադրած էր անոր պատրաստութեան համար: «Լաւ մնա՛»-ով կ'աւարտէր իր ել-նամակը:

Լաւ վիճակի մէջ էի Յուլիս 10-ին Թանգանիոյ մէջ, հակառակ անոր, որ 7-օրեայ լեռնագնացութիւնէ ետք նոր իջած էի Քիլիմանժարոյի գագաթին: Անակնկալի եկայ երբ համացանցի վրայ կարդացի Փրոֆեսորի մահուան գոյժը: Տխրութիւնս մը համակեց զիս: Ոչ միայն անձնական առումով, որ ա'լ պիտի չվայելէի իր հետ հաղորդակցելու եւ իրմէ գիտելիքներ ու խորհուրդներ ամբարելու հաճոյքը, այլ՝ ազգային

թեան եւ Յեղասպանութեան վերաբերեալ:

Անյուհետեւ, բազմահարկը սգակիրներու, եկեղեցւոյ բակին մէջ, Հայաստանի եւ ՀՅԴ-ի քայլերգերու ներքեւ, եռագոյնով ծածկուած դազաղը գետեղուեցաւ մեռելակառքին մէջ: Տխուր հրաժեշտ մը արդարեւ:

Շաբաթ Յուլիսի 22-ին, 2023, առաւօտեան ժամը 11:00ին Ֆրեդնոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, տեղի ունեցաւ փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի ազգային թաղումը, որուն ներկայ էին շրջանային եւ գաղութային տարբեր կազմակերպութիւններու ղեկավարներ եւ ներկայացուցիչներ:

Արարողութեան նախագահեց Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան արք. Տէրտէրեան: Աւարտին հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ Ֆրեզնոյի ազգային «Արարատ» գերեզմանատան մէջ:



Մեր ցաւակցութիւնները հանգուցեալի բոլոր հարազատներուն, մասնաւորաբար իր գաւազին «Ժառանգութիւն» կուսակցութեան հիմնադիր՝ Ռաֆֆի Յովհաննիսեանին:

առումով, որ մեզմէ կը բաժնուէր հակայ մը, որուն թողած բացը կարելի պիտի չըլլար լեցնել: Իսկապէս, երբ աչքի առջեւ կ'ունենանք իր կեանքը, գործունէութիւնը եւ թողած աւանդը, անտարակոյս կ'անդրադառնանք, որ անգուգական անձ մը բաժնուեցաւ մեզմէ: Բայց միեւնոյն ժամանակ չենք կրնար երախտապարտ չըլլալ իր թողած հսկայածաւալ եւ մեծարժէք աւանդին համար: Փրոֆեսորը թէեւ մեկնեցաւ այս աշխարհէն, բայց մեզի հետ է, ամէն անգամ որ կը բանանք իր բազմահատոր գործերէն մէկը, ու կը հաղորդուինք իրմով:

DADUR TRAVEL

Blessing of Holy Oil at Etchmiadzin

2023

Guided Trip Led by
Norayr Daduryan

AUTUMN TRIP TO ARMENIA
SEPT 25 - OCT 5 ↗

Trip Includes

- Roundtrip airfare from LAX via Lufthansa Airlines
- Transportation in Armenia
- Hotel accommodation at Marriott Hotel (double occupancy)
- Single Occupancy available for an additional \$600
- 6 lunches/2 dinners
- Entrance fee to all sightseeing destinations

\$3,099 per person
with flight

\$1,699 per person
land only

Book Now
(626) 660-9443
norayrdaduryan@gmail.com

«Ձուարթնոց» Մշակութային Միաւորի Կազմակերպեամբ ՀՀ Նախկին Հիւպատոս՝ Արմէն Բայրուրեանի Դասախօսութիւնը



ԿԱՐԻՆԵ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆ

Կար դասախօսութիւն. «Համաշխարհային հայկական սփիւռքն ու հայրենիքը՝ փոխգործակցութեան համակարգ եւ ուղիներ դէպի խտացուած համագործակցութիւն», 6 Յունիս 2023-ին: Դասախօսելու էր ՀՀ նախկին հիւպատոս Արմէն Բայրուրեանը:

Մեր հայրենիքի քաղաքական խառը անցուղարձերի այս մթնոլորտում պահանջուած եւ հրատապ թեմա էր չիչեալ նիւթը, եւ անշուշտ, պատասխաններ ստանալու նպատակով, կարելի էր փութալ լսելու:

Ինչպէս հայկական աւանդական որեւէ ձեռնարկ, ձեռնարկը կը վայելէր Արեւմտեան Թեմի բարեխնամ առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան արք. Տէրտէրեանի հովանաւորութիւնը, կազմակերպութեամբ «Ձուարթնոց» մշակութային միութեան: Ձեռնարկին բացման խօսքը կատարեց՝ բժիշկ Սիմոն Սիմոնեան: Գեղարուեստական յայտագրին հանդէս եկաւ երգիչ Գագիկ Բաղաբեան, բանաստեղծ Տիար Արմէն Բայրուրեան: Ներկաներուն մէջ կը տեսնուէին փաստաբաններ, բժիշկներ, միութենականներ, կուսակցականներ եւ սովորական ժողովուրդ՝ մենք, որ սպասուած էինք նորութիւնների:

Յարգելի դասախօսը յայտարարեց սկզբից. «Նպատակ եմ դրել մեզ համեմատել միւս ժողովրդների հետ, այսինքն ներկայացնել The best practices, եւ ասեմ՝ չկայ ոչ մի բան, որ բոլորին ընդունելի լինի, մենք կարող ենք վերցնել մեզ յարմարող մասերը»:

Նա ցուցադրեց Ս. Էջմիածնում գտնուող մի խաչ, որ մարմնաւորում է քրիստոնէութիւնը: Դրա վրայ կային յաւերժութիւնը խորհրդանշող երկու նշաններ. այն ունի մի քանի մեկնաբանութիւն՝ հայրենիք-սփիւռք, աշխարհասփիւռ հայրութիւն, առանց սփիւռքի չի կարելի պատկերացնել հայրենիքը:

Հետաքրքրական էր հայերի ծագման մասին վարկածների վերլուծումը. աշխարհում վիճելի հարց է, թէ հայը իր ապրած տեղանքում բնիկ է կամ եկուոր: Դասախօսն ասում էր, թէ այնքան հակասական են եղել կարծիքներն այդ մասին, որ երբ տպագրուել է Հայոց պատմութեան բազմահատորեան, լոյս չի տեսել առաջին հատորը, քանի որ չեն կարողացել համաձայնութեան գալ ընդունելի վարկածի շուրջ: Գիտական տեսակետը դուրս է գալիս յաղթական՝ մենք բնիկ Հայկական լեռնաշխարհից ենք:

Այնուհետեւ դասախօսը ներկայացրեց, թէ միշտ էլ եղել են տեղահանումներ, տուեց հայ ժողովրդի սփիւռքացման պատմականը, եւ որ սփիւռքը մեր մշակույթի կրողն է եղել. «Միթարեաններ, Պոլիս, Թիֆլիս, Նոր Ջուղա, Ամստերդամ, Հալէպ, Պէյրութ, սրանք հանդիսացել են կարեւոր օջախներ: Մենք՝ հայրենիք եւ սփիւռք միաժամանակ ապրող ժողովուրդ ենք, եւ դժուար է դրանք տարանջատել»: Նա նշեց տեղահանման հետ կապուած հայերին բնորոշ որոշ յատկանիշներ. «Մեզ DNA-ով փոխանցուեց ապրել տարբեր տեղերում, հայերը շատ արագ յարմարուած էին նոր վայրում, քանի որ յարգանք ունէին օտար մշակույթի հանդէպ, հայերը գէնք չունէին, դաւանափոխ չէին անում ուրիշներին, նաեւ չունէին պետութիւն, որ զաղտթատիրութիւն անէին: Ու այսպէս ապրում էին, եւ ձեւաւորուում էր ազգային ինքնութիւնը պահպանելու մշակույթը»:

Սփիւռքը կազմաւորուում էր երկու ձեւով՝ կամաւոր հիմունքներով, տնտեսապէս բարգաւաճելու նպատակով, եւ պարտադրուած (induced and forced), ապա դրանք միաձուլուում էին իրար:

Բայրուրեանը ընդգծեց մի երեւոյթ. «Մենք միշտ կենտրոնանում ենք անհատի վրայ: Հաւաքական ի՞նչ ջանք ենք գործադրել: Օրինակ՝ 17-րդ դարում Նոր Ջուղայի հայերը ստեղծել էին համաշխարհային առեւտրի ցանց, նրանք միասնական ձեւով բացել էին դպրոցներ, ուր ուսուցանում էին օտար լեզուներ, թուրքերէն, պատրաստում էին վաճառականներ: 1668 թուին Անգլիան նոյնիսկ առեւտրական պայմանագիր կնքեց հայերի հետ: Եթէ այդ ժամանակ կարողացել էինք, ինչո՞ւ այսօր չկարենանք»:

Ապա բանախօսը ներկայացրեց տեղեկութիւններ եւ վիճակագրական տուեալներ այլ ժողովուրդների եւ նրանց ստեղծած սփիւռքների մասին՝ հրէական, իռլանդական, իտալական եւ այլք: Գետոյական կեանքը, իրար մօտ ապրելը անշուշտ որ նպաստում է տուեալ ազգի սփիւռքի ամրապնդմանը, բայց դա չէր հիմնականը: Օրինակ՝ իտալական սփիւռքի գօրացման գաղտնիքը կայանում էր հետեւեալ նախապայմանների առկայութեամբ.

- ա. Ընտանիքը
 - բ. Կաթողիկէ եկեղեցին
 - գ. Եղբայրութիւնները:
- Դասախօսը նշում էր, որ երկիրները պէտք է տէր կանգնեն

իրենց սփիւռքներին՝ տալով իրանդացիների օրինակը (նրանք աշխարհում 70 միլիոն են): 1990-ականներին իռլանդիայի նախագահ Մերի Ռոբինսոնը կատարեց իր նախանցեալը չունեցող մի յայտարարութիւն՝ ասելով, որ ինքը նախագահն է բոլոր իռլանդացիների՝ թէ՛ ներսի եւ թէ՛ դրսի, եւ պէտք է փայփայել սփիւռքը:

Դասախօսը բարձրաձայնեց եւս մի ցաւոտ հարց՝ հայրենիքից տեղափոխուողներին դաւաճան համարելը:

Շատ հարագատ էր այդ թեման. չիշում եմ, երբ դեռ ուսանող էի Երեւանում, աւարտական տարում արդէն ամուսնացած էի սփիւռքահայ ուսանողի հետ (1975 թուական): Ձէի կարողանում ընկերներիս ասել, որ պիտի մեկնեմ Միրիա, որովհետեւ հայրենադաւուրութիւն էր հայրենիքից հեռանալը: Ու եղան որոշ հայրենասէրներ, ովքեր՝ որպէսզի այդ պիտակը չունենան, մինչեւ վերջ ապրեցին Հայաստանում (իմ հօրաքոյր Անժէլ Գիւրքեանը): Սրանք՝ որպէս օրինակ:

Այս կէտի շուրջ եւս Բայրուրեանը կատարեց լուսաբանումներ. «Այսօր Ամերիկայում ապրում են 23 միլիոն մեքսիկացիներ: Սկզբում տեղափոխուող-

ծակցում են իրար հետ: Գալով կառուցներին, օրինակ, եկեղեցին Հայաստանում աղօթելու տեղ է, իսկ սփիւռքում այն խոշոր կազմակերպութիւն է, որն ընդգրկում է համայնքը, դպրոցը, լեզուն, մշակույթը: Հայաստանում բոլոր ժամանակներում զգուշանում են քաղաքական հետեւանքներից, մեծ պահանջներից (ներդնողը երբեմն ցանկանում է դառնալ նախարար), եւ սփիւռքում միշտ չէ, որ հասկանում են Հայաստանի քայլերը: Եւ բուն պատճառը դարձեալ իրար չիմանալն է: Հայաստանից եկողը պէտք է լսի սփիւռքահային, սփիւռքահայը՝ հայաստանցուն: Հայաստանում պէտք է բացել սփիւռքի ամբիոններ, քանի որ առաջին քայլը գալիս է հայրենիքից: Մենք չենք կարողացել բարձրացնել սփիւռքի հետ մեր գործակցութեան մակարդակը, որով կարող էինք կառուցել հայրենիքը: Երկակի քաղաքացիութիւնը այդ ուղղութեամբ նպաստաւոր շարժում էր: Ի դէպ, շարժումները ինչքան ապաքաղականացած են, այնքան յաջողուում են ծրագրերը»:

Սփիւռքեան մի բնորոշ էջ է նաեւ աւանդական կուսակցութիւնների եւ կազմակերպութիւնների խնդիրը՝ արդեօք դրանք ապրե՞լ են իրենց ժամանակը, դասախօսը



ներին անուանում էին դաւաճաններ: Սակայն 2002 թուականին, Մեքսիկայի 62-րդ նախագահ Վինսենթ Կոքսը յայտարարեց, որ երկրից գաղթողները հերոսներ են, որ կարողանում են յաղթահարել դժուարութիւնները եւ յարատեւել մի նոր երկրում»: Ապա դասախօսը շարունակեց. «1947 թուականին, Իսրայէլից դուրս եկողին կոչում էին դաւաճան, Սակայն 3 տարի ցետոյ փոխեցին մօտեցման ձեւը. որդեգրեցին յատուկ քաղաքականութիւն, երկրի առաջընթացի մէջ ներգրաւեցին իրենց սփիւռքը, որ հայրենիքից դուրս պահպանում էր իր ապրելակերպը, ազգային դիմագիծը՝ առանց լեզուի, առանց հողի եւ օգտակար էր լինում իր հայրենիքին»:

Արտագաղթի հոսքը Հայաստանից սկսուեց 1975-ից, սակայն, ըստ դասախօսի, մեղաւորի այդ բարդոյթը մնաց հայերի մօտ: Պրն. Բայրուրեանը բացատրում էր հայկական սփիւռքի եւ հայրենիքի ունեցած փոխյարաբերութիւնը. «Պէտք է ճանաչել սփիւռքը, պէտք է ճանաչել հայրենիքը: Մեր ուժը տարբեր կարծիքներ ունենալու մէջ է, իսկ տարբեր կարծիքները շահում են փոխադարձ վստահութիւն, երբ գոր-

հարցը տալիս էր ինքն իրեն եւ բոլորին: Ըստ Բայրուրեանի անձնական կարծիքի՝ պէտք չէ դրանք հակադրել մէկը միւսին, դա շատ վնասակար է: Դրսում ապրող հայերի 80 տոկոսը դուրս է այդ կառուցներից, կարեւոր է դուրս մնացած զանգուածների ներգրաւել որքան հնարաւոր է: Պէտք չէ լինի դեկավար լինելու հարց, գործը պէտք է ընթանայ համագործակցութեամբ»:

Ինչպէս բժ. Սիմոնեանը իր խօսքում ասում էր՝ «Հայաստանը կայրութիւնների բախման դաշտ էր», մինչ օրս էլ այն նոյն կարգավիճակում է թէ՛ աշխարհագրականօրէն եւ թէ՛ իր տնտեսական վիճակով:

Երկար էր դասախօսութիւնը, ուսուցողական ուսումնասիրութիւն, իսկ մենք՝ լինելով անհամբեր եւ միշտ սպասելով արագ եզրակացութիւնների եւ որոշումների, ուզում էինք լսել աւելի յստակ բանաձեւումներ մե՛ր հայրենիքի եւ մե՛ր սփիւռքի անելիքների մասին: Յուսանք յարգելի բանախօսի հետ կարելի է հանդիպել այլ առիթներով եւս, ստանալու համար նոր ուղորդումներ՝ կապուած մեր ազգային գործելակերպի հետ:

Գալուստ Կիւլպէնկեանի Յիշատակի Օրուայ Ձեռնարկները Լիզպոնի Մէջ



Տ. Խաժակ Արք. Պարսամեան այս տարի եւս հրաւիրուած էր մասնակցելու Լիզպոնի մէջ Գալուստ Կիւլպէնկեանի յիշատակին նուիրուած ձեռնարկներուն, որոնք տեղի կ'ունենան Յուլիս 20-ին՝ յայտնի հայ գործարարի եւ բարեգործի մահուան տարելիցին:

Արդէն տարիներ շարունակ այդ ձեռնարկներուն անբաժան մաս կը կազմէ, Կիւլպէնկեան մրցանակի պարգեւատրման արարողութիւնը: «Մարդկութեան համար» մրցանակը, 1 միլիոն եւրո մրցանակային գումարը 2020 թուականէն սկսած կը շնորհուի այն անհատներուն եւ կազմակերպութիւններուն, որոնք լուծուածներ կը փնտռեն կլիմայի փոփոխութեան մարտահրաւերները դիմակայելու համար:

Յուլիս 19-ին կայացած հանդիսաւոր արարողութեան յանձնախումբի նախագահ, Գերմանիոյ Նախկին վարչապետ՝ կանցլեր Անկէլա Մերքելը՝ կենսական էքոհա-

լուստ Սարգիս Կիւլպէնկեանի հոգիի խաղաղութեան համար: Արարողութիւնը աւարտեցաւ Խաժակ Սրբազանի «Հոգևոցն հանգուցելոց» արթթբով եւ ելոյթով:

Գովաբանելով Գալուստ Կիւլպէնկեանը, որպէս հայազգի փայլուն գործարար եւ եզակի առատաձեռն ու մարդասէր անձ՝ Սրբազան Հայրը յիշատակեց անոր անթիւ բարեգործական առաքելութիւններէն միայն մի քանի հատը. Լոնտոնի, Քէնսինկթօնի Սուրբ Սարգիս հայկական եկեղեցւոյ հիմնադրումը, Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի լայնածաւալ Կիւլպէնկեան գրադարանի ստեղծումը, Պոլսոյ Սբ ֓րկիչ հայկական հիւանդանոցի հիմնումը: Որպէս Հայ Եկեղեցւոյ նուիրեալ գաւակ ան զգալի մասնակցութիւն ունեցաւ նաեւ էջմիածինի Մայր տաճարի վերականգման:

Սրբազանը իր ելոյթին մէջ ընդարձակ անդրադարձ կատարեց

Հայկազեան Համալսարանի Մաթոսեան ցուցասրահին մէջ, Չորեքշաբթի, 19 Յուլիս 2023ին տեղի ունեցած քիլիմներու գողտրիկ ցուցահանդէսով աւարտին հասաւ Յովհաննէս Շարամբէեանի անուան ժողովրդական արուեստներու թանգարանին հետ համալսարանի ուսանողական արտադասարանային գործունէութեանց գրասենեակի կազմակերպած "weave your own kilim" աշխատանոցը:



Արդարեւ, 5-18 Յուլիս երկարող շրջանին, լիբանահայ Ազգային Միացեալ, Հայ Աւետ. Գոյէճ, Հայ Աւետ. Շամբէան-Թաթիկեան, Հայ Աւետ. Կեդր. Բարձր., Հայ Կաթողիկէ Ս. Խաչ, ՀԲԸՄ, եւ Վահան Թէքեան վարժարաններու 35 աշակերտներ եւ մի քանի ուսուցիչներ մասնակցեցան կարպետ (քիլիմ) հիւսելու դասընթացին, որուն ընթացքին անոնք ոչ միայն ծանօթացան կարպետին եւ սորվեցան զայն հիւսելու վարպետութիւնը, այլեւ հիւսեցին եւ իրենց հիւսած

աւելի քան 60 քիլիմները հանրութեան ներկայացուցին վերոյիշեալ ցուցահանդէսին:

Մասնակից աշակերտները շատ ջերմութեամբ կապուեցան կարպետագործութեան: Անոնք Հայկազեան համալսարանին մէջ օրական երեք ժամ տեւող աշխատանքէն ետք տուն տարին իրենց գործերը՝ ստուր շտորունակելու նպատակով: Գրեթէ բոլորը աւարտեցին իրենց առաջին քիլիմները եւ անցան երկրորդին: Եղան ոմանք որոնք սկսան իրենց երրորդ քիլիմի հիւսքին, ուրիշներ իրենք որոշեցին իրենց հիւսքի նախը, բուրդերուն գոյնը, ոմանք հիւսեցին իրենց անունը:

Աշակերտական առաւօտեան աշխատանոցին կողքին, յեմիջօրէին կազմակերպուած չափահասներու հնգօրեայ աշխատանոցին մասնակցեցան շուրջ 15 հոգի, որոնց գործերը եւս ցուցադրուեցան վերոյիշեալ ցուցահանդէսին, ընդհանուր թիւը հասցնելով 75 ցուցանմուշի:



մակարգերը վերականգնման եւ պաշտպանութեան նպատակով լուծուածներու համար մրցանակակիր յայտարարեց երեք անձգ Պանտի «Ապաի ճանկուտին» համայնքի պետ (Ինտոնեզիա), Սեսիլ Պիպիան Նճէպեթին գործիչ եւ զիւղատնտես (Քամբոճ) եւ Լեւիա Սալկատոն՝ բնապահպան, ձեւաւորող, բեմադրող (Պրագիլ):

Յաղթողներու շնորհակալական խօսքէն ետք, բազմաթիւ պատուաւոր հիւրերու ներկայութեամբ, ելոյթ ունեցան Փորթուկալիոյ Նախագահ Մարսելօ Ռեպելօ տէ Սոգան եւ Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամի նախագահ Անթոնիօ Ֆէյժոն:

Երեկոն եզրափակեց Կիւլպէնկեան նուազախումբին համերգը:

Իսկ Յուլիս 20-ի առաւօտեան, Լիզպոնի Igreja de Nossa Senhora do Rosario de Fatima եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ պատարագ՝ Գա-

բոլորովին այլ ժամանակաշրջանի հայազգի մէկ այլ բացառիկ եւ վառ անհատականութեան Հայոց Հայրապետ, աստուածաբան, քրիստոնէական միասնութեան ռահվիրայ, միջնադարեան երաժշտութեան եւ գրականութեան ակնառու դէմքերէն Սբ. Ներսէս Շնորհալիի կեանքին եւ գործունէութեան:

Սրբազանի համոզմամբ այսօր ալ դիւանագիտութիւնը կրնայ ուղղորդուիլ Սգ Ներսէսի եւ Կիւլպէնկեանի մարդասիրական եւ խաղաղասիրական մօտեցումով այժմեայ ինդիւիդներուն եւ մարտահրաւերներուն առերեսուելու համար: Երկուքին գործունէութիւնն ալ կրնան կենարար օրինակ ծառայել ինչպէս քրիստոնէական միասնութեան որոնման, այնպէս ալ մեր ժամանակակից աշխարհը աղաւաղող կրօնական եւ բարոյական բնոյ-

Հայ Աւետարանական Գոլէճի Հարիւրամեակի Տօնակատարութիւններ Լոս Անճելըսի Մէջ

Celebrating 100 years of Armenian Evangelical College

Los Angeles, CA

Հովանաւորութեամբ Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան, Սեպտեմբեր 29-էն Հոկտեմբեր 1, 2023, Լոս Անճելըսի մէջ պիտի նշուի Պէյրութի Հայ Աւետարանական Գոլէճի (ՀԱԳ) հարիւրամեակը:

ՀԱԳ համապիւղեան նշանակութիւն ունեցող դպրոց մըն է, իբրեւ յետեղեռնեան Հայ սփիւռքի առաջին երկրորդական վարժարանը՝ հիմնուած իբրեւ այգպիսին 1923-ին: Անոր աշխարհասփիւղ շրջանաւարտները, ի մասնաւորի Ամերիկայի Միացեալ Նահանգներու (ԱՄՆ) տարածքին, գործուն մասնակցութիւն կը բերեն գաղութային, քաղաքական, կրթական, գիտական, հոգեւոր, մշակութային եւ այլ կառոյցներէ ներս, անկախ իրենց մասնագիտական ասպարէզներուն մէջ իրենց արձանագրած յաջողութիւններէն:

Այս առթիւ, Լոս Անճելըս այգրող խումբ մը շրջանաւարտներ կազմած են յանձնախումբ մը եւ ծրագրած են հետեւեալ ձեռնարկները, Sheraton Universal, Studio City

պանդոկին մէջ.

Ա. Ուրբաթ, Սեպտեմբեր 29, շրջանաւարտներու եւ հիւրերու հաւաք:

Բ. Շաբաթ, Սեպտեմբեր 30, Կլոր Սեղան «Հայ դպրոցը 10 տարի ետք» եւ «Լիբանանի ու ԱՄՆ-ի դպրոցներու համագործակցութեան հեռանկարներ»

Գ. Շաբաթ, Սեպտեմբեր 30, կալա ճաշկերոյթ, նախագահութեամբ ՀԱԳ նախկին աշակերտ Դոկտ. Նուպար Աֆէեանի:

Գ. Կիրակի, Հոկտեմբեր 1, պաշտամունք Լոս Անճելըսի Հայ Միացեալ Ժողովական Եկեղեցիին մէջ:

Նշենք, թէ սոյն ձեռնարկներուն ներկայ պիտի ըլլան եւ իրենց մասնակցութիւնը բերեն Պէյրութէն ՀԱԳ-ի տնօրէն Դոկտ. Արմէն Իւրնէշեան, Հայ Աւետ. Ա. եկեղեցւոյ հովիւ վեր. Ժիրայր Ղազարեան եւ դպրոցի հոգաբարձութեան ատենապետ Պրն. Ներսէս Պաղտոյան:

Արձանագրուելու եւ յաւելեալ մանրամասնութիւններու համար կրնաք այցելել www.aec100.net կայքը:

Աւետիսեան Դպրոցի 2022-2023 Ուսումնական Տարուան Աւարտական Զանգեւը



«Ինչպէս մայր թռչունն է ճախրանքի հանում իր սնուցած, թեւեր առած ձագուկներին, ես էլ ձեզ եմ մաղթում. Գնացէ՛ք ձեր երազանքին ընդառաջ, ճախրէ՛ք համարձակ: Մի՛ թուլացէ՛ք, մի՛ վարանէ՛ք, մի՛ ծուլացէ՛ք: Սովորէ՛ք, աշխատէ՛ք, խիզախէ՛ք: Սիրէ՛ք ու սիրուա՛ծ եղէ՛ք: Գնահատէ՛ք ուսումը, աշխատանքը, իմաստութիւնը...»:

Յուզիչ էր Աւետիսեան դպրոցի տնօրէն Մելանիա Գեղամեանի հրաժեշտի ուղերձը կրթօճախի հերթական՝ եօթերորդ շրջանաւարտներին: Ընդհանրապէս, սիրով շողախուն, յուզումնալից բազմաթիւ պահերով լեցուն, իւրապատուկ ու իւրօրինակ էր 2022-2023 ուսումնական տարուան աւարտական հանդէսը, որին որպէս պատուաւոր հիւրեր մասնակից եղան Ամերիկայի Հայ Աւետարանչական ընկերակցութեան (AMAA) ներկայացուցիչները, բարերարներ, երեւանեան բուհերի եւ դպրոցների ղեկավարներ, ծնողներ, նախկին շրջանաւարտներ:



Տիկին Մ. Գեղամեանի մաղթանքից յետոյ ցուցադրուեց դպրոցի մեծ բարերարին՝ երջանկայիշատակ էդուարդ Աւետիսեանին նուիրուած ֆիլմը: Անհնար էր այն դիտել եւ հիշանքից սիրելի էդի մեղմ ու բարի ձայնը լսել առանց յուզմունքի: Բոլորի հայեացքներն ուղղուած էին բարերարի այրուն՝ տիկին Փամելա Աւետիսեանին, ով, չխախտելով սիրելի ամուսնու հիմնած աւանդույթը, իր խօսքերով, «էդուարդի ոտնահետքերով շարունակում է քայլը դէպի Երեւան, դէպի Աւետիսեան դպրոց»:

Խորիմաստ խորհուրդների իսկական ընտրանի էր AMAA-ի Հայաստանի մասնաճիւղի տնօրէն Արեն Տէյրմէնճեանի ուղերձը մեծ կեանքի շէնքի կանգնած պատանիներին:

Այնուհետեւ հնչեցուեց օրուայ բանախօսի՝ ՀՀ Մարդու իրաւունքների նախկին պաշտպան Արման Թաթոյեանի խօսքը, որն ուղեկցուում է մարտահրաւէրների առաջ

կանգնած հայրենիքին գիտելիքներով պատուար դառնալու մաղթանք-պահանջով:

Վալերիկտորներ Նարէ Բագրատունեանը՝ փայլուն անգլերէնով եւ Մարիա Պետրոսեանը՝ անթերի ոսկեղենիկ հայերէնով ասացին երախտագիտութեան խօսքեր:

Հանդիսութեան պսակը կազմեց Աւետիսեան դպրոցի գլխաւոր



բարերարի՝ Փամելա Աւետիսեանի ելույթը. տիկին Փամելան կամ, ինչպէս մտերմօրէն նրան կոչում են աւետիսեանցիները, սիրելի Փամը խօսեց, պատմեց, իր սրտի խօսքն ասաց. հայերէնով եւ մի՞թէ լինում է սիրոյ ու ջերմութեան աւելի վառ ասպարոց. «Սիրելի՛ շրջանաւարտներ, այդ օրը հարիւր եւ աւելի անգամ ձեզ մաղթեցինք բարի երթ: Հաւատում ենք, որ այդպէս էլ կը լինի: Թող ձեր գլխավերեւում երկինքը անամպ լինի, իսկ հորիզոնները՝ միշտ բաց ու կանչող»:

Յայտագրի ընթացքին ելույթ ունեցան Նաեւ «Փարոս» կամերային երգչախումբը (ղեկավար՝ Բաֆֆի Միքայէլեան)՝ լուսայիշատակ էդր. Աւետիսեանի սիրած մեղեդիների հիասքանչ կատարումներով եւ ՀՀ վաստակաւոր արտիստ, դիրիժոր Սերգէյ Սմբատեանի «Երաժշտութիւն յանուն ապագայի» մշակութային հիմնադրամի կրթաթոշակառու տաղանդաւոր պատանիների նուագախումբը:

ՀՀ եւ Աւետիսեան դպրոցի դերօջանների ներքոյ եւ ծափողջոյնների ուղեկցութեամբ շրջանաւարտներն ստանում են հաւաստագրեր: Այնուհետեւ՝ գլխարկների նետման «դասական» արարողութիւն, Հայաստանեայց Աւետարանական եկեղեցու աւագ հոգեւոր հովիւ վերապատուելի Յովհաննէս Յովսէփեանը հնչեցնում է առաքելական օրհնութիւն, որին միանում է լեփլեցուն դահլիճը:

Թւում է՝ աւարտական հանդէսն անցաւ բոլոր «կանոններով», բայց Յունիսի 12-ի հանդէսը սովորականից շատ տարբեր էր:

Հայ Սեփականատերերի Պատկանող AJR Trucking Ընկերութիւնը Երկու Մրցանակի Եւ Արժանացել ԱՄՆ-ի Փոստային Համաժողովում



Միացեալ Նահանգների փոստային ծառայութեան խոշորագուն փոխադրողներից մէկը՝ AJR Trucking ընկերութիւնը Մայիսի 21-24-ը Հիւսիսային Քարոլինայի Շարլոթ քաղաքում անցկացուած Ամերիկայի Ազգային փոստային ֆորումին (NPF) փոստային ծառայութեան (USPS) կողմից արժանացել է երկու բարձրագոյն մրցանակների: Ազգային փոստային ֆորումին մասնակցել են ոլորտի աւելի քան 4000 ներկայացուցիչներ:

ԱՄՆ փոստային ծառայութեան գլխաւոր տնօրէն Լուի Դեյվիդը այլ բարձրաստիճան ղեկավարների հետ մէկտեղ AJR Trucking-ի գործադիր տնօրէն Յակոբ Խուրդիկեանին յանձնեցին 2 մրցանակները՝ «Մատակարարի գերազանցութիւն 2022» եւ «Տարուայ տրանսպորտային գործընկեր 2023»:

Առաջին մրցանակը շնորհուում է այն մատակարար ընկերութիւններին, որոնք տեխնոլոգիական գործընթացում նորարարու-

կում է հաւատարիմ մնալ որակի, առաքման, վարչական արդիւնաւետ կառավարման, ճշտապահութեան եւ գերազանցութեան դրսեւորման ամենաբարձր չափանիշներին համապատասխանող ծառայութիւններ մատուցելու սկզբունքին: Այս մրցանակները վկայում են այն մասին, որ ծառայութեան որակը, որին մենք ձգտում ենք, պահանջում է շարունակական ջանք եւ նուիրուածութիւն: Մենք շնորհակալութիւն ենք յայտնում Միացեալ Նահանգների փոստային ծառայութեանը՝ մեզ այս մրցանակներին արժանացնելու համար», - մեկնաբանել է AJR Trucking-ի գլխաւոր տնօրէն Յակոբ Խուրդիկեանը:

Որպէս ամերիկեան փոստ տեղափոխող ընկերութիւն՝ AJR Trucking-ը իր կայուն տեղն է ապահովել փոստային ծառայութիւն մատուցող ամերիկեան ընկերութիւնների լաւագոյն տասնեակում: Ընկերութեան գլխամասը գտնուում է Գալիֆորնիա նահանգի Քամփթըն



թիւն են ներդրել կամ արձանագրել պայմանագրային պահանջների բացառիկ կատարում՝ միաժամանակ ապահովելով բարձր որակ եւ ժամանակին մատակարարում:

Երկրորդ մրցանակը նախատեսուած է փոստային ծառայութեան այն մատակարարների համար, որոնց տրանսպորտային առաքման կատարողականութեան ցուցանիշները գերազանց են, միեւնոյն ժամանակ ակտիւօրէն նպաստում են արտանետումների նուազեցմանը եւ ունեն ռազմավարական ծրագիր՝ ուղղուած ապագային միտուած էլեկտրական տրանսպորտային միջոցների ներդրմանը: Ի դէպ դա լիովին համահունչ է փոստային ծառայութեան «առաքում Ամերիկայի համար» ծրագրին:

«AJR Trucking-ը շարունա-

քաղաքում, իսկ գրասենեակներն ու տրանսպորտային տերմինալները տարածուած են ամբողջ երկրով մէկ:

AJR Trucking-ը հիմնադրուել է 1984 թուականին եւ ամերիկեան փոստին տրանսպորտային ծառայութիւններ է մատուցում աւելի քան 30 տարի: Հայր եւ որդի Խուրդիկեաններն այս ընկերութիւնը ձեռք են բերել 2007 թուականին: Աւելի քան 15 տարի առաջ ամէն ինչ սկսուեց 8 բեռնատարով՝ \$940,000 եկամուտ ապահովող, իսկ այժմ աւտոպարկում ընկերութիւնն ունի աւելի քան 500 հիմնականում նորագոյն բեռնատար:

Հարաւային Գալիֆորնիայի համալսարանի (USC) Մարշալի անուն պիզնես ֆակուլտետն աւար-

97 Տարեկանին Կեանքին Հեռացալ Թորգոմ Փոստաճեան

Յաւով վերահասու եղանք գաղութի ծանօթ անձնաւորութիւններէն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ նախկին միաբան Թորգոմ Փոստաճեանի մահուան լուրին 97 տարեկանին:

Հանգուցեալը ծնած է 1926ին Վանք (Արաբկիր), կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 25 Մայիս 1947ին, օծակիրցներ ունենալով Եղիշէ արեղայ Կիզիրեանն ու Շահէ արեղայ Աճէմեանը:



Թորգոմ Փոստաճեան գիտական աշխատակիցը եղած է հայ ձեռագորագիտութեան մեծանուն վաստակաւոր Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Ա. Յովսէփեանց կաթողիկոսին (1867-1952): Անոնք միասնաբար ուղեւորուելով Երուսաղէմ, Հայոց Ս. Յակոբայ վանքին ձեռագրատան մէջ, ուսումնասիրութիւններ կատարելով լոյս ընծայած են «Յիշատակարան Հայ Ձեռագրաց» պատկառելի հատորը:

Այնուհետեւ երիտասարդ հոգեւորականը կ'ուղեւորուի Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Երջան մը ետք կը հրաժարի Կիլիկիոյ միաբանութենէն եւ կ'ընդգրկէ աշխարհիկ կեանքը: Հանգուցեալը հաստատուելով Գալիֆորնիա, կ'ունենայ բեղուն գործունէութիւն, մասնաւորաբար կը թափանցի բնագաւառներուն մէջ: Ան կը հանդիսանայ առաջին տնօրէնը Մոնթեպելլոյի Մեսրոպեան ազգային վարժարանին: Գործնապէս կ'աջակցի հայ գաղութի ծաղկումին, մասնակցելով տարբեր կառոյցներու օգտաշատ նախաձեռնութիւններուն՝ նիւթապէս եւ բարոյապէս:

Ունի հայ գաղութի եւ հայ դատի հետ առնչուող շահեկան ուսումնասիրութիւններ եւ հրատարակութիւններ:

Լոյս յաւերժի ճամբորդին եւ հանգիստ իր յոգնաբեկ աճիւններուն:

«ՄԱՍԻՍ»

Քսաններու Յիշատակում Սիւնիի Մէջ

Շարունակուած էջ 13-էն

րուն՝ ներառեալ ազատութեան եւ պետական անկախութեան համար, նոյնիսկ կեանքի գնով վճարուած պայքարի ելած արցախցիներուն համար»:

Աւստրալիոյ Հայ Աւետարանական Ընկերակցութեան նախագահ եւ գործադիր տնօրէն Վեր. Դոկտ. Գրիգոր Եղիշէան Վեր. Դոկտ. Գրիգոր Եղիշէանի մէջ յառաջացած մարդասիրական ճգնաժամին մասին: «Ինչքան ալ արիւնաքամ, մեր երկիրը ապրելու եւ երազելու երկիր է, ոչ թէ մեռնելու կամ յուսահատ ըլլալու», ըսաւ ան:

Ռայտ քաղաքի քաղաքապետ Սարգիս Ետեմեան իր խօսքը սկսաւ գնահատելով Հնչակեան կուսակցութեան աշխուժութիւնը եւ յիշեց կուսակցութեան հետ իր երկար տարիներու ծանօթութիւնն ու համագործակցութիւնը: Անոր համաձայն, հայկական ուժերու միջեւ պառակտում կ'ըլլայ երբ գործի պակաս ըլլայ, ուստի անհրաժեշտ է աշխատանքը: Ետեմեան ապա խօսեցաւ Աւստրալիոյ մէջ հայ ժողովուրդի ազգային կեանքին մասին, մասնաւորաբար կեդրոնանալով երիտասարդներու դերակատարութեան վրայ, անոնց կոչ ուղղելով աշխոյժ դեր խաղալու աւստրալական տեղական զոյգ կուսակցութիւններուն մէջ՝ վերջի վերջոյ ծառայելու համար նաեւ հայրենիքին: Ան առաջարկեց ճնշել աւստրալացի քաղաքական գործիչներուն վրայ: «Մեր գոյութեան իմաստը մեր հայրենիքն է՝ Հայաստանը», յիշեցուց Ետեմեան եւ կոչ ուղղեց որեւէ պաշտօն ծառայեցնե-

լու հայրենիքի շահերուն:

Գեղարուեստական բաժնով, Զանի Նազարեան Օգճեան ասումնաբեց Գառնիկ Աղաբաբեանի «Պայագիտ»ը, իսկ Վարդան Սվազլեան երգեց «Նպատակիս Հասնիմ» երգը:

Թեմական խորհուրդի եւ Ազգային Աւստրալիոյ Օրուայ Խորհուրդի փոխատենապետ Դոկտ. Ստեփան Գրգեաշարեան խօսեցաւ «Սփիւռք-Հայրենիք Մերձեցում» ի մասին, անդրադառնալով կարեւոր երեք գործօններու՝ հայրենիք եւ սփիւռք հասկացողութեան իմաստը, սփիւռքի հոգեկան վիճակը եւ ներուժը, ու վերջապէս ակնարկ նետել կորսուած առիթներուն՝ ապա խօսիլ ապագայի մասին:

Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի հայոց թեմի առաջնորդ Բարձր. Տէր Հայկազուն Արք. Նաճարեան նշեց, որ մենք տակաւին դաս չենք առած մեր անցեալի արդէտներէն, յիշեցնելով, որ հայուն միակ ընտրանքը միասնութիւնն է: «Այս մարդիկ երբ կը կախուէին, հաւանաբար ազատէին, եթէ ուրանային իրենց ինքնութիւնը: Սակայն անոնք ոչ միայն չուրացան, այլ կախողանէն մարգարէաբար խօսեցան հազարներու գալիքին եւ Հայաստանի անկախութեան մասին, թէեւ այդ օրերուն մէկը պիտի չհաւատար, որ կարելի է դէմ դնել Օսմանեան բանակի լաւագոյն ստորաբաժանումներուն: Ահա՛ հայուն ուժը, երբ ան միանայ եւ մէկ բռունցք դառնայ», ըսաւ Առաջնորդ Սրբազանը:

Քսան կախողաններու նահատակութեան 108-րդ տարելիցի ոգեկոչումին հանդիսութիւնը եզրափակեցաւ Սարգարապատի յարթերով:

Քսան Կախողաններու Հանդիսութեան

Շարունակուած էջ 14-էն

հետեւանքներ ունենալ, իւրաքանչիւրս իր ըսելիքն ու ընելիքը ունի, բայց համադրուած եւ համակարգուած պէտք է ըլլայ:

Սիրելի՛ հանդիսականներ, Քիչ ետք այս հանդիսութիւնը վերջ պիտի գտնէ եւ պիտի երթանք մեր տուները, Քսաններու եւ հայ ազգի բոլոր նահատակներու հայրենասիրական ոգիով ներշնչուած: Միշտ յիշենք, որ բիւրաւոր նահատակները իրենց երկնային բարձունքէն կը հսկեն մեզ, մենք պար-

տաւոր ենք ըլլալ անոնց կտակին հաւատարիմ ժառանգորդները, այլ ճանապարհ չունինք, քան անմնացորդ ծառայել հայ ժողովուրդի բարօր ապագային համար:

Մօտեցած է վերջին գուպարի պահը, ըլլանք պատրաստ եւ զգօն: Փարամազը մեզի պատգամեց. «Հայը կաթիլ առ կաթիլ կը մեռնի. հայը մէկ անգամ ալ պիտի մեռնի, որ յաւերժ ապրի»:

Փառք Քսաններուն: Կեցցեն Հայաստանն ու Արցախը: Կեցցէ՛ հայ ժողովուրդը:

Գալուստ Կիւլպէնկեանի Յիշատակի Օրուայ

Շարունակուած էջ 17-էն

թի բախումներու վերացման ճանապարհին:

Առիթէն օգտուելով, ան համառօտ ներկայացուց Սբ. Ներսէս Շնորհալիի այս յօբելանական տարուան նուիրուած վատիկանի մէջ կայանալիք տօնակատարութիւններու ծրագիրը: Ան առանձին կերպով ներկայացուց Հայոց Հայրապետի քրիստոնէական երկխօսութեան գաղափարի երեք լեւակները «Սիւններ», այն է Միասնութիւն, Մարդասիրութիւն եւ Շնորհ, որոնք հիմք կը հանդիսանան Շնորհալիի ոգեկոչման ձեռնարկներուն համար, նշելով, որ այդ նոյն սկզբունքները կեդրոնական դարձան նաեւ Գալուստ Կիւլպէնկեանի մարդասէրի եւ բարեբարի, ամբողջ ստեղծարար կեանքին ընթացքին:

Եկեղեցական արարողութենէն առաջ Սրբազան Հայրը այցելեց Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամի գրասենեակը, ուր հանդիպում ունեցաւ նախագահ Անթոնիօ Ֆեյժոյի եւ հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի այլ անդամներու հետ: Ապա առանձին գրոյց ունեցաւ Կիւլպէնկեան ընտանիքի ներկայացուցիչ ու հաստատութեան հոգաբարձուներու խորհուրդի մշտական անդամ Մարտին Եսայեանի եւ հիմնադրամի հայկական բաժնի տնօրէն Ռազմիկ Փանոսեանի հետ:

Յուլիս 19-ի երեկոյեան, Խաժակ Սրբազանի այցելութեան առիթով, Ռազմիկ Փանոսեանի հրաւերով, ընթրիք տեղի ունեցաւ Լիզպոնի հայկական Արարատ ճաշարանին մէջ, որուն մասնակցեցան տեղի հայ համայնքի խումբ մը ներկայացուցիչներ:

Հայ Սեփականատերերի Պատկանող

Շարունակուած էջ 18-էն

տելուց յետոյ Յակոբ Խոզդիկեանը մշակեց ընկերութեան ռազմավարական ուղղութիւնը եւ ապահովեց դրա զարգացումը՝ ժամանակի ընթացքում ստանձնելով գործադիր տնօրէնի պաշտօնը: Նրա հայրը՝ Խաչատուրը, ընկերութեան նախագահն է՝ ապահովելով կազմակերպական կառոյցի ներդաշնակութիւնը:

Ի դէպ AJR Trucking-ը dispatcher-ի ծառայութիւններ մատուցող կեդրոններ ունի նաեւ Հայաստանում եւ Մեքսիքոյում:

Ընկերութիւնը երեք անգամ արժանացել է Արծուի ոգի մրցանակի, որը շնորհուել է ԱՄՆ փոստային ծառայութեան կողմից՝ «արագ փոխադրումների բարձր որակով կառավարման համար»: Իսկ «Heavy Duty Trucking (HDT)» ամսագիրն էլ AJR Trucking-ը ճանաչել է «HDT 2022 լաւագոյն կանաչ փոխադրմիջոցը», որն առաջնորդում է ԱՄՆ բեռնափոխադրումների բնագաւառի կանաչ յեղափոխութիւնը:

Նպատակ ունենալով ստեղծել աւելի «կանաչ ապագայ» բեռնափոխադրումների ոլորտում՝ ընկերութեան գործարար մշակոյթը հիմնուած է նորարարութեան եւ բնապահպանական սկզբունքների խստագոյն պահպանման սկզբունքի վրայ: AJR Trucking-ը ը շահա-

գործում է սեղմուած բնական գազով (CNG) աշխատող աւելի քան 115 բեռնատար, որը նպաստել է 130 հազար տոննա ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը՝ նուազեցնելով աւելի քան 28 հազար մեքենայի շահագործումը, որը համարժէք է 2 միլիոն 170 հազար ծառերի տնկմանը: U.S. Gain-ի հետ համագործակցաբար ընկերութիւնը Քամպթընի իր տարածքում նաեւ շահագործում է CNG գազալցակայան, որն օգտագործում է վերականգնող բնական գազ (RNG) եւ սպառման նպատակով մատակարարում այն ինչպէս իր բեռնատարներին, այնպէս էլ հանրութեանը: Շուտով կը շահագործուեն CNG-ով աշխատող եւս երկու գազալցակայաններ:

AJR Trucking-ն առաջինն էր երկրում, որ օգտագործել է սեղմուած բնական գազով աշխատող բեռնատարների մի քանի նոր տեսակ եւ 2022 թուականին իրականացրել է Քենուորթի (Kenworth) նոր սերնդի էլեկտրական շարժիչներով բեռնատարների ամենամեծ պատուէրը, որն առ այսօր չի գերազանցուել: Ընթացիկ տարուայ սկզբին AJR Trucking-ը պատուիրել է 50 ջրածնային վառելիքի շարժիչով աշխատող նշանաւոր Նիքոլա (Nikola) բեռնատարների երկրում առաջին խմբաքանակը՝ կանաչ բեռնափոխադրամիջոցների շարքը համալրելու նպատակով:

Հայաստանի Ֆուտբոլի Հաւաքականը Պահպանած Է Դիրքը ՖԻՖԱ-ի Դասակարգման Աղիւսակին Մէջ



Հայաստանի ֆուտբոլի ազգային հաւաքականը պահպանած է դիրքը ՖԻՖԱ-ի դասակարգման աղիւսակին մէջ: Վարկանիշային նոր աղիւսակին մէջ Հայաստանի ընտրանին կրկին 90-րդն է, ինչպէս նախորդ ամիս: Դասակարգման աղիւսակի լաւագոյն տասնեակին մէջ դարձեալ փոփոխութիւն չկայ: Միմեանց կը յաջորդեն՝ Արժանթինը, Ֆրանսան, Պրագիլը, Անգլիան, Պելճիքան, Խրուաթիան, Հոլանտան, Իտալիան, Փորթուգալը եւ Սպանիան:

Լուկաս Սելարայեանի Կողմ Նպաստած Է «Քոլամպուս Քրիւի» Յաղթանակին

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբի չորսակող Լուկաս Սելարայեանի կողմ նպաստած է ակումբի յաղթանակին: Ամերիկեան MLS-ի հերթական հանգրուանին «Քոլամպուս Քրիւի» մրցեցաւ «Սենթ Լուիս Սիթի»-ի հետ եւ առաւելութեան հասաւ 2:1 արդիւնքով: «Քոլամպուս Քրիւի» առաջին կողմ նշանակած է Հայաստանի ֆուտբոլի հաւաքականի չորսակող Լուկաս Սելարայեանը: Վերջինս MLS-ի ընթացիկ մրցաշրջանին արդէն իսկ դարձած է 11 կողմ հեղինակ:

«Կրասնոտարը» Մերժած Է Սպերցեանի Փոխադրման Հետ Կապուած «Այաքսի» Առաջարկը

Ռուսական «Կրասնոտար» ֆուտբոլային ակումբը մերժած է «Այաքսի» իտալարտ Սպերցեանի փոխադրման հետ կապուած առաջարկը: Այս մասին կը գրէ Sport-express-ը: Ըստ պարբերականի, «Կրասնոտարի» համար անընդունելի է Սպերցեանի փոխադրման համար առաջարկուող 8,5 միլիոն եւրո առաջարկը: Նախապէս իտալարտ Սպերցեանի տեղափոխութեան մասին գրած էր սպորտային լրագրող Ֆապրիցիո Ռոմանոն: Սպերցեանը Ռուսաստանի նախորդ առաջնութեան մասնակցած է 28 խաղի, դարձած է 10 կողմ եւ 12 կողային փոխանցման հեղինակ:

«Լացիոն» Ու «Տինամոն» Համաձայնութեան Հասած Են Արսէն Զախարեանի Տեղափոխութեան Հարցով

Մոսկուայի «Տինամոն» ու Իտալիայի փոխ ախոյեան Հոռմի «Լացիոն» համաձայնութեան հասած են 20-ամեայ կիսապաշտպան Արսէն Զախարեանի տեղափոխութեան հարցով, կը հաղորդէ Gianlucadimarzio.com-ը: Տեղափոխման գումարը կը կազմէ 10 միլիոն եւրո, նախատեսուած է նաեւ 4 միլիոն եւրո նուէր: Աւելի վաղ ռուսական մամուլը գրած էր, որ Արսէն Զախարեանին ձեռք բերելու մտադրութիւն ունի հոլանտական «Ֆեյենորտը», որ անոր տեղափոխման համար առաջարկած է 8 միլիոն եւրո, սակայն «Տինամոն» տեղափոխութենէն կ'ակնկալէ 15 միլիոն եւրո: Անցած մրցաշրջանին Զախարեանը Ռուսաստանի առաջնութեան եւ գաւաթի խաղերուն մասնակցած է 37 հանդիպման, նշանակած է 5 կողմ, կատարած է 7 կողային փոխանցում:

Հայաստանի Մէջ Աշնան Կը Կայանայ Հերթական Մեծ Միջազգային Մրցաշարը

Հայաստանի կառավարութիւնը չգեղուցուող հարցերու փաթեթին մէջ ընդունեց որոշում, որով կ'ապահովուի Սամպոյի աշխարհի առաջնութեան կատարումը Հայաստանի մէջ: Վարչապետ Նիկոլ Փաշինեան ըսաւ. «Աշնան հերթական մեծ միջազգային մրցաշարն է որ տեղի պիտի ունենայ: Յաջողութիւն կը մաղթեմ մեր մարզիկներուն»: Սամպոյի աշխարհի առաջնութիւնը տեղի կ'ունենայ Նոյեմբերի 10-ին եւ կ'աւարտի Նոյեմբերի 12-ին:

Մեսիի Յաղթական Կողմ Նորամուտի Խաղին



Աշխարհի ախոյեան Արժենթինի հաւաքականի 36-ամեայ չորսակող Լիոնել Մեսին յաղթական կողմ հեղինակ դարձաւ «Ինթեր Մալմի» հետ իր նորամուտի խաղին: Ամերիկեան խումբը Լիկաներու գաւաթի (Leagues Cup, ԱՄՆ-ի եւ Մեքսիքոյի խումբերու մասնակցութեամբ) խաղին մրցեցաւ մեքսիկական «Քրուզ Ազուլի» հետ եւ յաղթեց 2:1 արդիւնքով: Լիոնել Մեսին ՄԼՍ-ը ներկայացնող խումբի պահեստայիններու մէջ էր եւ փոխարինման դուրս եկաւ 54-րդ վայրկեանին: Յաղթական կողմ նշանակեց աւելացուած չորրորդ վայրկեանին տուգանայինէն: Խաղին ներկայ եղած են նշանաւոր ամերիկացի թենիսիստուհի Սերենա Ուիլյամսը ամուսնին՝ ամերիկացի գործարար Ալեքսիս Օհանեանի հետ, ամերիկահայ հեռուստաստղ Քիմ Քարտաշեանը գաւակներուն հետ, նշանաւոր ամերիկացի պասթեթպոլիստ Լեպրոն ձեյմսը: Ակումբի անգլիացի համասեփականատէր Տէյլիտ Պեքհեմ եւս ընտանիքի հետ հետեւեալ է խաղին:

«Մանչեսթըր Եունայթըտ» Պարտութեան Մատնեց «Արսենալին»

ԱՄՆ շրջագայութեան մեկնած Անգլիոյ փոխախոյեան Լոնտոնի «Արսենալն» ու «Մանչեսթըր Եունայթըտը» ընկերական հանդիպում ունեցան Նիու ձըրրզիի մէջ: 2:0 արդիւնքով առաւելութեան հասաւ «Մանչեսթըր Եունայթըտը»: Հոլանտացի էրիկ տեն Հափի գլխաւորած խումբէն առաջին խաղակէսին աչքի ինկան փորթուկալցի կիսապաշտպան Պրոնու Ֆերնանտեսը եւ անգլիացի կիսապաշտպան Ջեյթոն Սանչոն:

Երլինկ Հոլանտի Տուպը Նպաստեց «Մանչեսթըր Սիթիի» Յաղթանակին

Անգլիոյ ախոյեան, գաւաթակիր, Ախոյեաններու Լիկայի գաւաթակիր «Մանչեսթըր Սիթին» Թոքիոյի մէջ ընկերական հանդիպում ունեցաւ ճափոնական «Եոքոհամայի» հետ: «Սիթի» առաւելութեան հասաւ 5:3 արդիւնքով: Հիւրերու կազմէն երկու կոեի հեղինակ դարձաւ նորուեկիացի չորսակող էրլինկ Հոլանտը:



Ֆորմուլա-1. Մաքս Ֆերստապենի 7-րդ Անընդմէջ Յաղթանակը



«Ռետ Պոլի» հոլանտացի մրցարշաւոր Մաքս Ֆերստապենը 7-րդ անընդմէջ յաղթանակը արձանագրեց Ֆորմուլա-1-ի հանգրուաններուն: Աշխարհի ախոյեանի յաղթանակով աւարտեցաւ Հունգարիոյ Մեծ մրցանակը: Այս մրցաշրջանին Ֆերստապենը 9-րդ յաղթանակը արձանագրեց, իսկ իր արհեստավարժ ասպարէզին մէջ՝ 44-րդը: